

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԼԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼԻՔՅԱՆ ՎԱՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ

ՀԱՅ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՅԱՐՑԸ
ԱՆԴՐԿՈՎՎԱՍՈՒՄ
(1917 թ. ՆՈՅԵՄԲԵՐ-1918 թ. ՄԱՐՏ)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հակոբյան Ա.Ս.

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մուրադյան Մ.Ա.

պատմական գիտությունների դոկտոր
Ստեփանյան Գ.Ա.

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2012 թ. մայիսի 4-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. ապրիլի 3-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

խորհրդային Միության փլուզումը և հանրապետությունների անկախացման գործընթացը հայ պատմագիտությանն առաջադրեցին վերաիմաստավորել, վերանայել և պատմական սկզբնաղբյուրային նյութն անկաշկանդ, բայց միաժամանակ օբյեկտիվ ու հայեցի կերպով օգտագործելու ճանապարհով՝ լուսաբանել Հայաստանի առաջին Հանրապետության առաջացման հիմնահարցերը:

Այդ կարևորագույն պատմագիտական և քաղաքացիական հնչեղություն ստացած հարցի առաջին հիմնադիր փուլը ձևավորվել է 1917 թ. ռուսաստանյան Փետրվարյան հեղափոխությամբ, երբ ժամանակավոր կառավարության հռչակած արմատական որոշումներն ու ձեռնարկումները սկիզբ դրեցին համառուսաստանյան դաշնային ժողովրդավարական հանրապետության կազմում՝ ազգային ինքնուրույն, քաղաքացիական և հասարակական-քաղաքական կյանքի հեռանկարին:

Հոկտեմբերյան բուլշևիկյան հեղաշրջումը ձախողեց ու կասեցրեց համառուսաստանյան նոր տիպի պետության կայացման նվիրական գաղափարը: Զինված ապստամբության միջոցով իրականացնելով պետական հեղաշրջում, ապա և 1918 թ. հունվարին ցրելով Սահմանադիր ժողովը ու այդպես կրկին դիմելով պետական հեղաշրջման քայլին, բուլշևիկները վերջ դրեցին ռուսաստանյան պետության ժողովրդավարական զարգացմանը՝ հիմք դնելով միակուսակցական մենատիրության դարաշրջանին:

Անդրկովկասում սկսվեց տևական և հետևողական պայքար իշխանության համար: Այդ պայքարի կենտրոնները դարձան Թիֆլիսն ու Բաքուն: Երկրամասի քաղաքական կենտրոնում՝ Թիֆլիսում, վրացական մենշևիկների նախաձեռնությամբ և ակտիվ դերակատարության հետևանքով, հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների խմբավորումը ձևավորեց նոր կառավարություն՝ խորհրդային իշխանությունը չճանաչող ազգային իշխանության մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ: Բաքվի խորհուրդն իր հերթին երկրամասի ազգային-քաղաքական ուժերին առաջադրեց իշխանության այլընտրանքային տարբերակը՝ երկրամասի խորհրդայնացումը: Այդ անգիջում և իրարամերժ պայքարը շարունակվեց ընդհուպ մինչև 1918 թ. ապրիլ-մայիս ամիսները և թուրքական արշավանքի պայմաններում, երբ հասարակական-քաղաքական կյանքում գերակայություն ձեռք բերեց պայքարի ազգային-ազատագրական ուղղվածությունը, հանգեցրեց անկախ հանրապետությունների առաջացման գործընթացին:

Անդրկովկասում առավել սուր կերպով դրսևորվեց իշխանության ազգայնացման հիմնահարցը, երբ ընդհանուր քաղաքական հակառակորդի՝ բուլշևիզմի դեմ կազմակերպվեց ազգային-ժողովրդավարական ուժերի համատեղ կառույց:

Թեմայի արդիականությունն ու հրատապությունը. Իշխանության հիմնահարցն Անդրկովկասում 1917թ. նոյեմբեր – 1918թ. մարտ ժամանակահատվածում և ազգային-քաղաքական կյանքի աննախադեպ հորձանուտում հայտնված հայկական ուժերի դիրքորոշման խնդրի գիտական ուսումնասիրությունն ունի արդիական-քաղաքական կարևոր նշանակություն: Բուլշևիկյան հեղաշրջումից հետո երկրամասում ժավալվող հասարակական-քաղաքական ու ազգային ոլորտի զարգացումները այս կամ այն առումով անմիջականորեն առնչվում էին պատմական այդ բեկումնային ժամանակաշրջանի կենտրոնական՝ իշխանության

հիմնահարցի հետ, հաճախ պայմանավորվում էին դրանով: Ի տարբերություն Ռուսաստանի կենտրոնների, Անդրկովկասում իշխանության համար պայքարն ընթանում էր մի կողմից ազգային-ժողովրդավարական ու հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների, մյուս կողմից՝ այդ երկուսի դաշինքի ու խորհուրդների միջև:

Ինչպես խորհրդահայ, այնպես էլ Հայաստանի Հանրապետության, հայկական սփյուռքի ու նաև վրացական ու արքերջանական պատմագրությունը ուսումնասիրության հատուկ առարկա չեն դարձել այդ հիմնախնդրի և նրա կենտրոնում առանձնացող Կոմիսարիատի ստեղծման և բազմաբնույթ գործունեության խնդիրը: Մինչդեռ վերջինիս քաղաքականության հետազոտումը լուսաբանում է ոչ միայն բոլշևիկյան իշխանությունը չճանաչող երկրամասային կառավարության յուրահատուկ, բարդ և հակասական վարքագիծը, այլև անուղղակի կերպով, բացահայտում է Ռուսաստանից անջատման առաջին՝ թերևս գործնական փուլի ողջ գործընթացն ու դրա առանձնահատկությունները:

1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. մարտ ընկած ժամանակահատվածում էր նաև դրվում Անդրկովկասի հետագա ռազմաքաղաքական, հասարակական զարգացումների, ազգամիջյան հարաբերությունների, նոր կողմնորոշումների հիմքը, որն ի վերջո հանգեցնում է անկախ Անդրկովկասի, ապա և ազգային պետությունների առաջացմանը:

Ռուսումնասիրության նպատակն ու խնդիրները. Երկա ուսումնասիրության գլխավոր նպատակն է՝ արխիվային փաստաթղթերի, ձեռագիր-հուշագրությունների, պարբերական մամուլի և թեմային առնչվող գրականության համակողմանի հետազոտության հենքի վրա ներկայացնել Անդրկովկասում իշխանության հիմնահարցի, վերջինիս հանգույցում ձևավորված Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեության և այդ ամենի կենտրոնում հայ իրականության և հայկական գործոնի դերի համահավաք պատկերը՝ 1917 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. մարտն ընկած ժամանակահատվածի ռազմա-քաղաքական և հասարակական զարգացումների հորձանուտում: Աշխատությանն առնչվող խնդիրների հետազոտման նպատակով քննության են առնվել հետևյալ հարցերը. վեր հանել բոլշևիկյան հեղաշրջման հանդեպ Անդրկովկասի հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունների և կուսակցությունների դիրքորոշման տարաբնույթ նոտիվներն ու առանձնահատկությունները, պարզել երկրամասում ազգային իշխանության կազմակերպման, դրա փուլերի, Կոմիսարիատի ստեղծման, իշխանության ազգայնացման խնդրի շուրջ ծավալվող տեսական բուռն ու ուշագրավ քննարկումների համապարփակ պատկերը, բացահայտել և վերլուծել Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականության ամբողջական էությունը, այդ թվում՝ նրա սոցիալ-տնտեսական, ֆինանսական, կրթական-լուսավորական, հասարակական-քաղաքական ոլորտի, ազգային քաղաքականության, վարչական սահմանաբաժանումների, զենստվոների կազմակերպման, ռազմա-քաղաքական ու դիվանագիտական գործունեության ասպարեզում, անդրկովկասյան իշխանության հայազգի կոմիսարների զբաղեցրած դիրքորոշումը:

Ատենախոսության կարևորագույն նպատակներից է հետհոկտեմբերյան հայ իրականության մի շարք կենսական ու առաջնահերթ խնդիրների լուսաբանումը երկրամասում իշխանության հիմնահարցի համատեքստում: Դրանց թվում են. անդրկովկասյան երկաթուղու շրջանում վրաց-թաթարական հակառուսական խռովությունների, «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի, Թիֆլիսի գրավման Ստ. Շահումյանի ծրագրի, Բաքվի 1918 թ. մարտյան զոյամարտի ու

դրանց հարակից հարցերը: Աշխատության մեջ առանձնակի կերպով լուսաբանվել են Երևանի նահանգում և Երևան քաղաքում բոլշևիկյան հեղաշրջումից հետո ծավալվող ազգային-հասարակական խմորումները, խնդիր է դրվել վեր հանել այստեղ կենտրոնացած գործիչների ու նորաստեղծ ազգային մարմինների գործունեության միջոցով՝ նահանգը կոմկասահայության ազգային-քաղաքական համախմբման ու ռազմական կենտրոնի վերածելու հետևողական գործընթացը:

Ուսումնասիրության գիտական նորույթը. Հայ և անդրկովկասյան պատմագիտության մեջ այս աշխատությունը թերևս առաջին փորձն է՝ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո իշխանության հիմնահարցի համատեքստում լուսաբանելու Անդրկովկասի ու հայ իրականության քաղաքական ու քաղաքացիական պատմությունը 1917 թ. նոյեմբեր – 1918 թ. մարտ ժամանակահատվածում: Բարձրացված գիտական հիմնահարցերի և նոր հարցադրումների ամբողջությունը թույլ է տալիս հիմնավորել այն հանգամանքը, որ ներկայացվող ատենախոսությունը պատմագիտության համեմատաբար երիտասարդ ուղղության՝ քաղաքական հայագիտության բնագավառին է պատկանում: Ատենախոսության հենքը հիմնականում շրջանառության մեջ առաջին անգամ դրվող սկզբնաղբյուրային նյութն է: Առաջին անգամ և ամբողջական ձևով հետազոտվել է Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորման գործընթացի և նրա տարաբնույթ գործունեության հիմնախնդիրը, քաղաքական ընդհանուր հակառակորդի՝ բոլշևիզմի դեմ անգամ ժամանակավոր դաշինքների ձևավորման գործընթացը, մասնավորապես, երկրամասային իշխանության համակարգում հայկական կուսակցությունների և հայ գործիչների դիրքորոշումը: Միաժամանակ փորձ է արվել վրացական և ադրբեջանական քաղաքական ուժերի վարքագիծը ներկայացնել այդ ժողովուրդների շահերի և քաղաքական ծրագրերի համատեքստում, մի հանգամանք, ինչն ավելի է սրում ու բացահայտում հայկական քաղաքական բազմաշերտ միջավայրի առավելություններն ու բացթողումները: Ատենախոսության մեջ կարևորվում է հատկապես հայ ազգային, քաղաքական գործիչների փոխգիշխումների և ազգային շահի գերակայության գիտակցության պայմաններում համերաշխելու, միասնաբար գործելու ռազմավարությունը: Ընդգծենք, որ ներկայացվող ժամանակահատվածում Անդրկովկասի քաղաքական զարգացումների, ազգամիջյան հարաբերությունների, նոր իրավիճակում թուրքիայի և Ռուսաստանի հետ ձևավորվող շահերի ու կապերի, հայկական ու երկրամասային մյուս կուսակցությունների գործունեության ողջ համապատկերը ու վերջինիս համակողմանի ուսումնասիրությունը ոչ միայն հայագիտական, այլև կոմկասագիտական նկատելի կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում: Այն շահեկան է ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների ազգային-քաղաքական հիմնահարցերի հետազոտման առումով: Ուստի և սույն ատենախոսությունը որպես հիմնահարցերի նման լայն շրջանակի խորը, համակողմանի և ամբողջական ուսումնասիրության առաջին փորձ և նորույթ է հայ պատմագրության մեջ:

Ուսումնասիրության գործնական նշանակությունը. Ատենախոսությունն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական, կիրառական նշանակություն: Նրա դրույթները կարող են օգտագործվել Հայաստանի և անդրկովկասյան երկրների ժողովուրդների պատմության և քաղաքականության խնդիրներին նվիրված միասնական ու ամբողջական աշխատության, ինչպես նաև դասընթաց կազմելու համար: Դրանք կարող են օգտակար լինել 1917-1918 թթ. հիմնահարցերին, Հայաստանի և անդրկովկասյան մյուս ազգային պետությունների առաջացման հիմնահարցերն ուսումնասիրողների, քաղաքական կուսակցությունների

պատմությամբ զբաղվողների, ինքնապաշտպանական մարտերի, ազգային բանակի առաջացման, ազգամիջյան հարաբերությունների, միջազգային դիվանագիտության, Հայկական հարցի, ինչպես նաև հարակից երկրների պատմության հիմնահարցերը հետազոտողների համար:

Ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները. Ուսումնասիրությունն ընդգրկում է 1917 թ. հոկտեմբերի վերջից մինչև 1918 թ. ապրիլ ամիսներն ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ բոլշևիկյան հեղաշրջումից ու վերջինիս հետևանքով անդրկովկասյան նոր իշխանության՝ Կոմիսարիատի առաջացումից մինչև Սեյմի ձևավորումը: Քանի որ մի շարք կարևորագույն հիմնախնդիրների լուսաբանումը անմիջականորեն տեղավորվում է իշխանության հիմնահարցի և Կոմիսարիատի գործունեության համատեքստում, ուստի դրանց ամբողջական ու լիարժեք հիմնավորման նպատակով, պատմական իրադարձությունների ժամանակագրական շրջանակները հասցվել են մինչև 1918 թ. ապրիլ ամիսը: Որոշ մասնավոր դեպքերում էլ քննարկումները տեղափոխվել են Փետրվարյան հեղափոխության ժամանակաշրջանը: Նման մոտեցումը պայմանավորված է նաև հետազոտության արդիականությամբ և հիմնահարցի գիտա-քաղաքական կարևորությամբ: Ատենախոսության աշխարհագրական շրջանակներն ընդգրկում են Արևելյան Հայաստանն ու Անդրկովկասի հայաշատ կետրոններ՝ Թիֆլիսը, Բաքուն, Գանձակը, մասամբ Հյուսիսային Կովկասն ու Պարսկաստանը, ներկայիս Վրաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների տարածքները, իսկ Կովկասյան բանակի հետ առնչվող խնդրների կապակցությամբ՝ նաև Արևմտյան Հայաստանի բազմաթիվ շրջաններն ու բնակավայրերը:

Ատենախոսության փորձաքննությունը. աշխատանքը քննարկվել և հրատարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի նիստում:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը. Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք պատմական սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, վիճակագրական նյութերի և գրականության քննական հետազոտության և պատմա-համեմատական ուսումնասիրության մեթոդաբանությամբ: Հետազոտվող հիմնախնդիրները դիտարկել ենք փաստագրական տվյալների վերլուծական քննության միջոցով:

Սկզբնաղբյուրների տեսություն. Աշխատությունը շարադրված է արխիվային տարաբնույթ սկզբնաղբյուրների, ժամանակի պարբերական մամուլի, տպագիր սկզբնաղբյուրային գրականության, հայ և օտար հեղինակների հետազոտությունների քննական ուսումնասիրության և վերլուծության հիման վրա:

Թեմայի գիտական լուսաբանման համար առաջնահերթ բացառիկ կարևորություն ունեն արխիվային նյութերը, որոնք նոր լույս են սփռում հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա:

Ներկա ուսումնասիրության համար իբրև սկզբնաղբյուր են ծառայել Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվում (ԱՂԻԱ Գրչուի), Ռուսաստանի պետական ռազմա-պատմական արխիվում (РГВИА), Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ուսումնասիրման ինստիտուտում (Մատենադարան), Հայաստանի Հանրապետության պատմության պետական թանգարանում (ՀՀՊՊԹ, ֆոնդ փաստաթղթային), Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվում (ԳԱԹ) պահվող նյութերը:

Թեմայի յուրահատկությունից ելնելով, կարևորագույն սկզբնաղբյուրային հիմք է ծառայել 1917-1918 թթ. Անդրկովկասում հրապարակված պաշտոնական¹ կուսակցական² և անկուսակցական³ մամուլի նյութը: Այն լայն հնարավորություն է ընձեռել սրընթաց զարգացող հասարակական-քաղաքական իրադարձություններն ու գործընթացները ներդաշնակել տվյալ ժամանակաշրջանի ռիթմի հետ, հնարավորինս պահպանել ժամանակի շունչը և որ առավել կարևոր է՝ հանեմատության մեջ ապահովել թե՛ փաստական նյութի հավաստիությունը, թե՛ եզրահանգումների օբյեկտիվությունը:

Բաքվի 1918 թ. մարտյան իրադարձությունների կապակցությամբ, ինչը աղբյուրաբանական պրոպագանդան մեր օրերում օգտագործում է որպես հակահայկական ընդհանուր պետական ծրագրի մի բաղկացուցիչ, օգտագործել ենք նաև «Новое Время» օրաթերթը⁴:

Որպես կարևորագույն սկզբնաղբյուրային հենք է ծառայել տպագիր սկզբնաղբյուրային գրականությունը: Այն կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի: Առաջին խմբին կարելի է դասել սակավաթիվ, բայց առանձնահատուկ արժեք ունեցող այն գրականությունը, որը հրապարակվել է 1917-1920 թթ. ընթացքում, այսինքն՝ բոլշևիկյան հեղաշրջմանն անմիջապես հաջորդած և ազգային անկախ համրապետությունների ձևավորման ու գործունեության փուլում: Երկրորդ խումբը ներկայացնում են խորհրդային իշխանության առաջին տասնամյակի ընթացքում հրապարակված աշխատությունները: Մեզ հետաքրքրող հիմնախնդիրների լուսաբանմանը նվիրված այդ կարգի գրականությունն իրենից հիմնականում ներկայացնում է փաստաթղթերի, նյութերի և օրենքների ժողովածուներ, կուսակցական, պետական գործիչների ելույթներ, հուշեր:

1917-1930-ական թվականներին հրատարակված գիտական, հրապարակախոսական ու հուշագրական նյութն այն ընդհանուր առավելությունն ունի, որ դեռևս չի հասցրել ենթարկվել լիակատար գաղափարական-կուսակցական աղճատման, պահպանել է կուսակցական ներկայանակի բազմազանությունն ու ինքնատիպությունը:

Առաջին խմբի գրականության շարքում հիշարժան են Ա. Ստավրովսկիի⁵, Գ. Թումանովի⁶, Բ. Իշխանյանի⁷, Ն. Ժորդանիայի⁸, Գ. Ղարաջյանի⁹ աշխատությունները: Հատկապես կարևորում ենք վրացական մենշևիկների առաջնորդներից Նոյ Ժորդանիայի ճառերն ու զեկուցումները, որոնք

¹ “Республика” (Тифлис), “Кавказское слово” (Тифлис).

² «Հորիզոն» (Թիֆլիս), «Արև» (Բաքու), «Ազատամարտ» (Թիֆլիս), «Ձանգ» (Երևան), «Աշխատանք» (Երևան), «Շարժում» (Ախալցխա), «Աշխատավոր» (Թիֆլիս), «Գործ» (Բաքու), «Հայրենիք» (Բոստոն), «Վեն» (Փարիզ), «Դրօշակ» (Փարիզ), «Молот» (Тифлис), «Մշակ» (Թիֆլիս), «Народная Свобода» (Тифлис), «Պայքար» (Թիֆլիս), «Известия Бакинского Совета», «Известия Совета рабочих и солдатских депутатов гор. Тифлиса» (Тифлис), «Бакинский рабочий» (Баку), «Кавказский рабочий» (Тифлис), «Աշխատանքի դրոշակ» (Բաքու):

³ «Հայաստան» (Թիֆլիս), «Վան-Տոսպ» (Թիֆլիս):

⁴ Новое Время, Ереван, 2011, 29 марта, N 1997, 31 марта, N 1998, 5 апреля, N 2000.

⁵ А.И. Ставровский, Программы партий и их отношение к важнейшим вопросам, Тифлис, 1917.

⁶ Г.М. Туманов, Организация земства в Закавказье, Тифлис, 1918.

⁷ Н.Н. Жордания, За два года, Доклады и речи, Тифлис, 1919.

⁸ Գեորգ Ղարաջեան (Ս.Տ. Արկունեդ), Անդրկովկասի քաղաքական կեանքը 1918 թվին, Թիֆլիս, 1919:

⁹ Բ. Իշխանեան, Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, Բաքու, 1918:

համենատաքար լիարժեք կերպով բացահայտում են բոլշևիկյան հեղաշրջումից հետո սոցիալ-դեմոկրատիայի՝ վրացական ազգային գունավորմամբ հանդես եկող մենշևիզմի մարտավարությունը, քաղաքական կողմնորոշումը, բոլշևիզմի և Խորհրդային իշխանության նկատմամբ ձևավորվող դիրքորոշման փուլային զարգացումը: Այս ելույթներում առավել քան բաց և ազատ կերպով շեշտադրվում են Անդրկովկասում վրացական մենշևիկների գլխավորությամբ՝ ազգային իշխանության ստեղծման առաջնահերթությունը, երկրամասի քաղաքական կյանքում ազգային նոր դաշինքների ձևավորումը, քաղաքական հեգեմոնիային հասնելու եղանակները, քաղաքական հակառակորդներին մեկուսացնելու ձևերը, բազմաթվ այլ կարևորագույն խնդիրներ:

Խորհրդային իշխանության և հետհոկտեմբերյան Անդրկովկասի քաղաքական վերնախափի, երկրամասի ազգերի ապագայի և քաղաքական կողմնորոշման և այլ ուշագրավ հարցադրումներ տեղ են գտել Ա. Դենիկինի աշխատության մեջ¹⁰:

Ատենախոսության մեջ բարձրացվող հիմնահարցերին առավել ամբողջական, համակողմանի ու գիտական մեկնաբանման նպատակով, հնարավորության սահմաններում օգտվել ենք տարաբնույթ փաստաթղթերի¹¹, օրենքների¹², կանոնադրությունների¹³, հեղափոխական կազմակերպությունների բանաձևերի¹⁴ ժողովածուների նյութերից:

Մեր կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել չորս աշխատություն՝ “Временное положение о земских учреждениях в Закавказье” (Тифлис, 1918), Գ. Թունանովի “Организация Земства в Закавказье” (Тифлис, 1918), “Земельные законы Закавказского правительства”, (Тифлис, 1918), “Сборник законов, инструкций, разъяснений по Министерству Земледелия”, (Тифлис, 1918): Արխիվային նյութի հետ համատեղ այդ աշխատությունները ետպես լրացնում են մեր կողմից հայ պատմագիտության մեջ առաջին անգամ հատուկ ուշադրության և ուսումնասիրության արժանացած Անդրկովկասյան կառավարության կողմից զեմստվոյական քաղաքականության հիմնահարցը: Այն

¹⁰ А.И. Деникин, Очерки русской смуты, Москва, 1991.

¹¹ Закавказский Сейм, Стенографический отчет, Тифлис, 1918, Армяно-грузинский вооруженный конфликт, Баку, 1919, Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, История классово-борьбы в Закавказье, сборник статей, книга первая, Тифлис, 1920, Введение С.Е. Сефа, Закавказье после Октября, Москва-Ленинград, 1925, Революция 1917 г. в исторических документах (составители: Ш. Чхетия, М. Полиевктов), Тбилиси, 1930, Борьба за пролетарскую революцию в Грузии. Очерки, 1917-1921, Тбилиси, 1936. Документы внешней политики СССР, т. 1, Москва, 1957, Борьба за победу советской власти в Грузии, Документы и материалы (1917-1921 гг.), Тбилиси, 1958, Великая Октябрьская социалистическая революция, Энциклопедия, Москва, 1987, Политические деятели России, 1917, Биографический словарь, Москва, 1993, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, 1828-1923 (փաստաթղթերի ժողովածու), Երևան, 1972; Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ. (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 2003; Հայոց ազգային համախորհրդակցությունը, Փաստաթղթեր և նյութեր, ԲՀԱ, թիվ 1-2, Երևան, 1992:

¹² Сборник законов, инструкций и разъяснений по министерству земледелия, Тифлис, 1918, Земельные законы Закавказского правительства, Тифлис, 1918.

¹³ Временное положение о земских учреждениях в Закавказье, Тифлис, 1918.

¹⁴ Протоколы Закавказских революционных советских организаций, т. 1, Тифлис, 1920, Военно-революционные комитеты действующей армии, 25 октября 1917 г. — март 1918 г., Москва, 1977, Войсковые комитеты действующей армии, март 1917 г. — март 1918 г., Москва, 1982.

սերտորեն առնչվում է երկրամասի ազգային քաղաքականության, տարածքային սահմանաբաժանումների հիմնահարցին, այդ համատեքստում պարզում ու բացահայտում է կուսակցությունների ազգամիջյան հակասությունների պատճառները, ինչպես նաև ազգային անկախ պետությունների հեռանկարների որոշ մանրամասներ:

Չեռհոկտեմբերյան Անդրկովկասում ծավալվող հասարակական-քաղաքական կյանքը, միջկուսակցական պայքարը, իշխանության հիմնահարցի դրսևորումը, երկրամասի փուլային հեռացումն ու անջատումը խորհրդային Ռուսաստանից և կարևորագույն այլ խնդիրներ տեղ են գտել Ս. Սեֆի¹⁵, Ս. Արկունեդի¹⁶, Ալ. Ստավրովսկիի¹⁷ աշխատություններում:

Սեզ հետաքրքրող հիմնահարցի և ժամանակահատվածի բազմաթիվ էական դրվագներ իրենց արտացոլումն են գտել հայ անվանի պետական և ազգային կուսակցական գործիչների հիմնարար աշխատություններում: Այդ շարքում են Ալ. Խատիսյանի, Ս. Վրացյանի, Ավ. Շահխաթունյանի, Ռ. Տեր-Մինասյանի, Արտ. Դարբինյանի, Արշ. Խոնդկարյանի, Ստ. Շահումյանի աշխատությունները, հողվածները, զեկուցումները, հուշերը¹⁸:

Հատկապես կարևորում ենք Ս. Վրացյանի կողմից Հայ զինվորական միության գործունեության, հայկական զինուժի ձևավորման գործընթացի, Երևանի ազգային խորհրդի ու Հատուկ կոմիտեի հետ կապված հարցերի լուսաբանումը, Երևանի նահանգում 1918 թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում՝ թուրքական արշավանքի պայմաններում ծավալվող թաթարական, քրդական հակահայկական խռովությունների և դրա դեմ կազմակերպվող դիմադրության վերաբերյալ անմիջական մասնակցի վկայությունները:

Արժեվորում ենք մի քանի խումբ առանցքային հիմնահարցերի առնչությամբ, այդ թվում՝ Անդրկովկասում իշխանության խնդրի, Ելիզավետպոլի ու Շամխորի բազմաշերտ դեպքերի, Բաքվի խորհրդում ընթացող գործընթացների, 1918 թ. մարտյան իրադարձությունների մասին Ստ. Շահումյանի տասնյակ հողվածներն ու ելույթները: Դրանք բացահայտում են հատկապես Անդրկովկասի հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլոտներում դրսևորվող վրացական-թաթարական համագործակցության հակահայկական ուղղվածությունը, իշխանությունը գրավելու հարցում անգամ՝ վրացական բոլշևիկների երկինաստ և ազգայնական պահվածքը, Դաշնակցության հետ համատեղ հակաթուրքական ձևակառուցման, Կովկասյան ռազմաճակատի կազմավորման գործընթացները և այլն: Ուշադրության են արժանի նրա «Շմարտությունը Ելիզավետպոլի իրադարձությունների մասին», «Նոր

¹⁵ С.Е. Сеф, Революция 1917 г. в Закавказье (Документы и материалы), Тифлис, 1927, նույնի՝ Расстрел в Александровском саду 10 февраля 1918 года в Тифлисе, Тбилиси, 1927, նույնի՝ Борьба за Октябрь в Закавказье, Тбилиси, 1932.

¹⁶ С.Т. Аркомед, Материалы по истории отпадения Закавказья от России, Тбилиси, 1931.

¹⁷ Ал. Ставровский, Закавказье после октября, Москва-Ленинград, 1925.

¹⁸ Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրուք, Բ Տպագրութիւն, 1968, Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, նույնի՝ Վրացեան Ս., Կեսնքի ուղիներով, Դեպքեր, Դեմքեր, Ապրումներ, Դ հատոր, Պեյրուք, 1965, А. Шахатунян, Административный передел Закавказского края, Тифлис, 1918, Ռուբեն, Հայ Յեղափոխականի մի յիշատակները, Է հատոր, Թեիրան, 1982, Արտակ Դարբինեան, Հայ ազատագրական շարժման օրերն, Յուշեր 1890 էն 1940, Երևան, 2003, Բ Տպագրութիւն, Արշաճ Խոնդկարեան, Օպոզիցիան Հանրապետական Հայաստանում, Վեմ, Փարիզ, 1933, թիվ Բ, նոյեմբեր-դեկտեմբեր, Ստ. Շահումյան, ԵԼԺ, հհ. 3,4, Երևան, 1978:

իշխանության կազմակերպումը Կովկասում», «Ռուսական հեղափոխությունը և Անդրկովկասյան իշխանությունը», «Անդրկովկասյան Կոմիսարիատը և հեղափոխությունը Անդրկովկասում», «Կովկասյան բանակի երկրային երկրորդ համագումարը», «Գործերի դրությունը Կովկասում», «Նամակ Ի. Ստալինին» հոդվածները, բազմաթիվ որոշումներ, հրամաններ, կոչեր:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը. Անդրկովկասում իշխանության համար պայքարի համատեքստում հետհոկոտեմբերյան հասարակական-քաղաքական կյանքի զարգացումների ու վերափոխումների, ժողովրդավարական հեղափոխական կազմակերպությունների և բոլշևիզմի միջև պայքարի, երկրամասի ազգային միացյալ իշխանության և խորհրդային կարգերի այլընտրանքային մարտահրավերների և այդ ամենի համայնապատկերին զուգահեռ հայկական քաղաքականության հիմնահարցերի ամբողջությունը մեր պատմագիտության կողմից առ այսօր առանձին, հատուկ և ամբողջական հետազոտման չի արժանացել:

Խորհրդային պատմագրությունը պարտադրված ու հասկանալի ելակետային դրդապատճառների շրջանակներում գերազանհատել և ուղղորդված կաղապարի մեջ է ներկայացրել Անդրկովկասում խորհրդային իշխանության համար մղվող պայքարը՝ վերջինիս հաղորդելով միակողմանի, անվերապահ «ճշմարիտ» բուլշևիկյան նկարագիր:

Համապատասխան սահմանափակ, հաճախ մեկը մյուսին կրկնող և նեղ շրջանակ ընդգրկող պատմագիտական խնդիրները տեղ են գտել հարյուրավոր խորհրդային աշխատություններում, որոնց մեծ մասը հասկանալի պատճառներից էլնելով դուրս են մնացել մեր ուշադրությունից:

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի և հիմնահարցերի վերաբերյալ այդ ուսումնասիրություններից շատերը ամփոփված են մատենագիտական մեկ ժողովածուի մեջ, որը որպես այդպիսին արժեքավոր է, համեմատաբար ամբողջական ծառայում է իր նպատակին¹⁹:

Միաժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանի մի շարք հիմնահարցեր խորհրդային մի խումբ պատմաբանների աշխատություններում՝ թեև միակողմանի և զաղափարայնացված, սակայն այնուամենայնիվ գիտական լուծումներ են ստացել, ավելին՝ բազմաթիվ նոր պատմագիտական խնդիրներ են բարձրացվել: Պետք է հաշվի առնել նաև այն համագամանքը, որ պատմաբանների մի մասն իրենց նոր աշխատությունները գրել են Հայաստանի անկախ հանրապետության ժամանակաշրջանում փորձ է արվել առավել անկաշկանդ լուսաբանել իրադարձությունները:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Կովկասյան բանակի հետ կապված խնդիրները, երկրամասում իշխանության այլընտրանքի երևանի հասարակական-քաղաքական կյանքի և հարակից այլ բազմաթիվ ազգային հարցեր տեղ են գտել Հ. Մելիքյանի աշխատությունների մեջ²⁰: Նոր իրադրության պայմաններում Հայկական հարցի զարգացումների, «Թուրքահայաստանի մասին» իրավարտակի, ՀՀԴ-բոլշևիկ համատեղ մարտավարության և այլ հարցեր պատշաճ հետազոտման

¹⁹ Великий Октябрь и победа Социалистической революции в Закавказье, Указатель советской литературы, Москва, 1977.

²⁰ Հ.Ս. Մելիքյան, Երևանի հասարակական-քաղաքական կյանքի պատմությունից, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 1968, թիվ 8; Հոկտեմբերյան հեղափոխությունը և Կովկասյան բանակը, Երևան, 1970, Источникововедение и историография революционного движения в Кавказской армии в 1914-1918 гг., Ереван, 1972.

են ենթարկվել Լ. Խուրշուդյանի գրքում²¹: Պրոֆեսոր Յ. Մելիքյանն իր մենագրության մեջ, ավելի ուշ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ. Խուրշուդյանն օրինակ, ցավ էին հայտնում, որ իրենց չի հաջողվել հայտնաբերել Կովկասյան բանակի երկրամասային երկրորդ համագումարում «Թուրքահայկական հարցի» մասին ընդունված բուլղարիական բանաձևի տեքստը: Այդ մասին համանուն հոդվածում վկայում է Ստ. Շահունյանը, սակայն հույժ կարևոր ապացույց-նյութը, որը հիմնավորելու էր բուլղարներ Ստ. Շահունյանի, Գ. Ղորղանյանի հայամետ ռազմավարությունը, իշխանությունը գրավելու ազգային հեռանկարը, անհայտ էր մնում: Մեզ հաջողվել է գտնել այդ բանաձևը, այն էլ՝ «Հորիզոն» թերթում, ինչը հիմնավորում է հայկական ազգային կուսակցության և մի խումբ հայ բուլղարների թեև ժամանակավոր, բայց կայացած համագործակցության փաստը:

1917 թ. նոյեմբեր-1918 թ. ապրիլ ժամանակաշրջանում մեր ուշադրության կենտրոնում եղած պատմագիտական հիմնահարցերի վերաբերյալ օգտագործել ենք վրացի և ադրբեջանցի մի շարք հեղինակների աշխատություններ: Դրանցում, բացի զուտ փաստագրական նյութից մեզ առանձնահատուկ կերպով գրավել է այն հանգամանքը, որ հիմնականում 1930-1950-ական թվականներին հրապարակված այդ մենագրություններում՝ «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» սկզբունքից էլնելով, հարևան Հայաստանի նկատմամբ իրականացվող վերացական, ադրբեջանական քաղաքականությունը հաճախ ավելի օբյեկտիվ է ներկայացվել, քան մեր օրերում: Նման բնույթի «շեղումներով» գրքերի մեջ կարելի է հիշատակել Գ. Խաչապուրիձեի²², Մ. Տերցվաձեի²³, Ա. Սուրգուլաձեի²⁴, Մ. Իսկենդերովի²⁵, Ա. Բալանի²⁶ աշխատությունները:

Պատմագիտական որոշ մասնակի խնդիրներ, այդ թվում հայ-ռուսական, հայ-վրացական, վրաց-թաթարական դաշինքի, Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականության բնութագրման, գերմանո-թուրքական դաշինքի հետ երկրամասի կառավարության մերձեցման, միջկուսակցական կապերի ու քաղաքականության և այլ հարցերի մասին ուշագրավ, ինքնատիպ և ժամանակի քննությունը բռնած վերլուծություն և զնահատականներ տեղ են գտել Ավետիք Իսահակյանի²⁷, Լեոյի²⁸ (Առաքել Բաբախանյան), Սարգիս Արարատյանի²⁹, Դավիթ Անանունի³⁰ (Դավիթ Տեր-Դանիելյան), Աստվածատուր Խաչատրյանի³¹, Ա.-ԴԻ-ի³²

²¹ Լ.Ա. Խուրշուդյան, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977:

²² Գ.Վ. Կաչապուրիձե, Борьба за пролетарскую революцию в Грузии, Очерки, 1917-1921, Тбилиси, 1936, Большевики Грузии в боях за победу советской власти, Москва, 1951.

²³ Մ.Վ. Շերցվաձե, Революционное движение в Грузии в 1914-1917 гг., часть II (1917 г.), Тбилиси, 1960.

²⁴ Ա.Ն. Սուրգուլաձե, Закавказье в борьбе за победу социалистической революции, Тбилиси, 1971.

²⁵ Մ.Ս. Իսկենդերով, Из истории борьбы коммунистической партии Азербайджана за победу советской власти, Баку, 1958.

²⁶ Ա. Բալաև, Азербайджанское национально-демократическое движение в 1917-1920 гг., Баку, 1980.

²⁷ Ավետիք Իսահակյան, Հայկական հարց, Երևան, 2005:

²⁸ Լեո, Անցյալից, Երևան, 2009:

²⁹ Ս. Արարատեան, Ճշմարտութիւններ Կովկասի մասին, Պուրթշ, 1941:

³⁰ Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. Գ, (1901-1918), Վենետիկ, 1926:

³¹ Աստվածատուր Խաչատրյան, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, կազմողներ և խմբագիրներ՝ Վ.Ն. Ղազարխանյան, Ա.Ս. Վիրաբյան, Ս.Ս. Միրզոյան:

(Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Յա. Կայալովի³³, Ջոն Կիրակոսյանի³⁴, Ռիչարդ Հովհաննիսյանի³⁵ աշխատություններում:

Ա-Ղո-ի «Հայության երկունքը» ձեռագիր, անտիպ աշխատությունը պահվում է ՀՀ Պատմության թանգարանում և մեր կողմից է առաջին անգամ դրվում գիտական շրջանառության մեջ: Այն զգալի ուշագրավ փաստեր ու դիտարկումներ է պարունակում մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի գործընթացների և գործիչների վերաբերյալ:

Խորհրդային և հետխորհրդային փուլերի՝ այդ թվում և սփյուռքահայ պատմագրության մեջ՝ Անդրկովկասում բուլշևիկյան հեղաշրջումից հետո ազգային իշխանության ձևավորման գործընթացի և Կոմիսարիատի ամբողջական գործունեության պատմությունը չի ուսումնասիրվել:

Ատենախոսության թեմային և զլխավոր հարցադրումներին առնչվող հարցերին իրենց հետաքրքրության շրջանակներում հպանցիկ անդրադարձել են մի շարք պատմաբաններ, հուշագիրներ և իրադարձությունների մասնակից գործիչներ: Թեմատիկ առումով նրանց պայմանականորեն բաժանել ենք չորս խմբի. ա) «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի³⁶, բ) Երևանի ազգային խորհրդի, Արամ Մանուկյանի և նրա համախոհների գործունեության, հայկական գինուժի ձևավորման, Երևանի նահանգում ծավալվող թաթարական, քրդական խռովությունների³⁷, գ) Բաքվի 1918 թ. մարտյան իրադարձությունների³⁸ և դ)

³² Ա-Ղո, Հայության երկունքը, ՀՀ Պատմության թանգարան, Նոր պատմության բաժին, թղթ. 839/195 դ. (ձեռագիր, անտիպ):

³³ J.Kayaloff, The butle of Sardarabad, Paris, 1973.

³⁴ Дж. Киракосян, Алексей Дживелегов и его историко-публицистическое наследие, Ереван, 2007.

³⁵ Richard G. Hovhannissyan, Armeia on the Road to Independence 1918, Los Angeles, 1967, նույնի՝ The Republic of Armenia, vol I; 1918-1919, Berkeley, Los Angeles, London, 1971.

³⁶ **С. Бельский и А. Манвелов**, Революция 1917 г. в Азербайджане (хроника событий), Баку, 1927; **Ստ. Շահունյան**, ԵԼԺ, հհ. 3,4, Երևան, 1978; **Լ.Ա. Խուրշուդյան**, Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը, Երևան, 1977; **Ռ.Փիրունյան**, Հայաստանը ՀՀԴ - բուլշևիկ հարաբերությունների ոլորտում (1917-1921), Երևան, 1997, **Հր.Ռ. Սիմոնյան**, Անդրանիկի ժամանակը, Բ գիրք, Երևան, 1996, նույնի՝ Թուրք-Հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

³⁷ **Ս. Վրացյան**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993: **Արշ. Աստվածատրյան**, Արամը, Վեմ, Փարիզ, 1934, թիվ Ը, նոյեմբեր-դեկտեմբեր, Արամը Երևան, 1991, Վ.Հ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997: **J. Kayaloff**, The butle of Sardarabad, Paris, 1973; **Է.Ա. Զոհրաբյան**, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000: **Ա. Ասրյան**, Արամ Մանուկյան, Երևան, 2009, **Ե. Սարգսեան**, Երեւանը 1917 թականին, Հայրենիք, Բոստոն, 1950, թիվ 9, սեպտեմբեր; **Սեդա Գալստյան**, Սահակ Թորոսյան, Հայաստանի առաջին հանրապետության Երևանի նահանգապետը, Երևան, 2007; **Ա. Նազարյան**, Հայկական գործմասերի կազմավորումը Կովկասյան ձևատում (1914-1918), Երևան, 1999, **Մ. Կարապետյան**, Հայկական ազգային բանակային կորպուսի ստեղծման պատմությունից, Երևան, «Բանբեր Երևանի համալսարանի», 1994, թիվ 1:

³⁸ **Б. Байков**, Воспоминания о революции в Закавказьи (1917-1920 гг.), Архив Русской революции, т. IX, Берлин, 1923; **Е.Ф. Лудшвейт**, Турция в годы Первой мировой войны, 1914-1918 гг., Военно-политический очерк, Москва, 1966, Из истории иностранной интервенции в Армении в 1918 году, Ереван, 1970 (сост. Х.А. Бадалян), **Г.В. Пипия**, Политика Германии в Закавказье в 1918 году, Сборник документов, Тбилиси, 1971, **Г.З. Алиев**, Турция в период правления младотурок (1908-1918 гг.), Москва, 1972, **Ա.Հ. Զարուբյան**, Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918թ. և ինքնապաշտպանական կռիվները, Երևան, 1984; **И. Дубинский-Мухадзе**, Шаумян, Москва, 1965, **Сур. Шаумян**,

առանձին կուսակցությունների, ագրարային շարժումների, Հայ առաքելական եկեղեցու և այլ հարցերի վերաբերյալ աշխատություններում³⁹։

1917 թ. Փետրվարյան հեղափոխության և հոկտեմբերյան հեղաշրջման պատմության հարցերը լուսաբանվել են նաև «Հայաստանի ազգային ատլասում», համապատասխանաբար՝ Վ. Մելիքյանի և Վ. Ղազախեցյանի կողմից⁴⁰։

Այսպիսով, թեմային առնչվող նորահայտ արխիվային և պարբերական մանուկի հարուստ նյութի, ինչպես նաև տպագիր սկզբնաղբյուրների և գրականության հիման վրա, լուսաբանել ենք 1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո Անդրկովկասում իշխանության հիմնահարցը և դրա համատեքստում երկրամասում ծավալվող հասարակական-քաղաքական կյանքը, ազգային ու ազգամիջյան հարաբերությունները, Անդրկովկասը հսորհրդային Ռուսաստանից անջատելու գործընթացի փուլային զարգացումը, դրանում վրացական մենչևիզմի նախածեռնող ու գլխավորող գործունը և այդ ամենի հետ ու զուգահեռ հայ իրականության մեջ և հատկապես Երևանի նահանգում ընթացող բազմաշերտ ու տարաբնույթ գործընթացների պատմությունը։

Ստեճախության կառուցվածքը և բովանդակությունը:

Бакинская Коммуна, Баку, 1927; **Խ.Յ. Բարսեղյան**, Ստ. Շահումյան, Երևան, 1968, **Է.Ա. Токаржевский** Бакинские большевики организаторы борьбы против германо-турецких интервентов в Азербайджане в 1918 году, Баку, 1947; նույնի՝ Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане, Баку, 1957, **Եղիշե Ա. քահ. Գեղամեանց**, Տաճիկները Կովկասում է Բազուի անկումը, Պրակ առաջին, Բազու, 1919; **Եղիշե Պահլաունի**, Յուշամատեան, Երևան, 2006, **Հովհ. Քաջագունի**, Հ.Յ. Ղազնակցութիւնը անելիք չունի այլ եւս, Վիեննա, 1923, **Ա. Գիւլխանդանեան**, Բազուի հերոսամարտը, Հայրենիք, Պոսթըն, 1941, թիւ 9, 11, 12, Անդրկովկասը եւ Բազուի դէպքերը, Հայրենիք, Պոստըն, 1967, թիւ 1, հունուար; **Ս. Մելիք-Եօլջեան**, Բազուի հերոսամարտը, Հայրենիք, Պոսթըն, 1925, Գ տարի, թիւ 7, մայիս; **Բ. Իշխանեան**, Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, Բազու, 1918; **Ս. Շաքիրեան**, Դրուագներ մօտիկ անցեալից, Հայրենիք, Պոսթըն, 1923, թիւ 7, մայիս; էջ մը հայ-թուրքական կռիվներէն, Հայրենիք, Պոսթըն, 1923, թիւ 11, սեպտեմբեր; **Ռոստոմ**, Մահուան վաթսուամեակի առթիւ, Պէյրուք, 1979; **Ա. Ալչուջեան**, Ռոստոմը Բազուում, Հայրենիք, Դ տարի, թիւ 7 (365), հուլիս, 1956; **Ռ. Դարբինեան**, Փոքրիկի օրերուն, Հայրենիք, Իմ տարի, թիւ 1(264), Պոսթըն, 1948; **Ronald G. Suny**, The Baku Commune 1917-1918, Class and nationality in the Russian revolution, 1972, Princeton; **Հ. Ավետիսյան**, Հայկական հարցը 1918 թ., Երևան, 1997; **Գ. Аветисян**, Генерал Акоп Баградуни, ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիվ 1; **Գ.Ա. Ստեփանյան**, Բաքու քաղաքի հայության պատմությունը (Պատմա-ժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011; **Դ. Կնյազյան**, Ադրբեջանական դեմոկրատական հանրապետության Կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, 2008; **Ս. Հովհաննիսյան**, Հ.Յ.Դ. - բոլշևիկ հարաբերությունները Անդրկովկասում 1917-1918 թթ., թեկն. ատենախոսության սեղմագիր, Երևան, 2009:

³⁹ **Վ. Ղազախեցյան**, Հայաստանի գյուղացիության պայքարը հողի համար, ՀՍՄՀ ԳԱ «Լրաբեր» հասարակական գիտությունների, Երևան, 1987, թիվ 11, **Ս.Յ. Մելիքյան**, Սոցիալիստ-հեղափոխականները Հայաստանում և Անդրկովկասի հայաշատ քաղաքներում 1900-1920 թվականներին, Երևան, 1997, **Վ.Յ. Մելիքյան**, Էջմիածնի եկեղեցական համագումարը (Ռուսահայ հոգևորականութեան համագումար, 1917 թ. յունիս), Բազմավեպ, ԵՎԱ տարի, թիւ 1-4, 2003, Վենետիկ; նույնի՝ Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան Կոմիսարիատի գործունեությունը և հայ իրակաությունը (1917 թ. նոյեմբեր-1918 թ. փետրվար), Երևան, 2010 թ.։

⁴⁰ Հայաստանի ազգային ատլաս, հտ. Բ, պատ. խմբագիր՝ Բ. Հարությունյան, Երևան, 2008:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների, գրականության ցանկից և բովանդակությունից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 458 էջ:

ԼԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, գիտական նորույթն ու նպատակը, ժամանակագրական և աշխարհագրական շրջանակները, կիրառական նշանակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության քննական տեսությունը:

ՉԼՈՒԿԱՆ ԱՆՈՒՑԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԽՆԴԻՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Առաջին ենթագլուխ - Անդրկովկասի հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունների և կուսակցությունների դիրքորոշումը բոլշևիկյան հեղաշրջման հանդեպ:

Բոլշևիկյան հեղաշրջումն արմատապես խաբիլեց Ռուսաստանի ազգային, պետական և քաղաքական դարավոր կառույցը, խափանեց պատմական զարգացման և քաղաքական ու քաղաքակրթական համակարգի շարունակական օրինաչափ ընթացքը: «Տաս օր, որ ցնցեց աշխարհը» Ու. Չերչիլը գնահատեց հետևյալ կերպ. «Հին դաշնակցի փոխարեն մեր առջև ուրվական է կանգնած, որը նման է աշխարհում մինչև այժմ գոյություն ունեցած որևէ բանի: Մենք տեսնում ենք պետություն առանց ազգի, բանակ առանց հայրենիքի, կրոն առանց Աստծո»⁴¹:

Հոկտեմբերի 26-ին (նոյեմբերի 8) համաանդրկովկասյան երեք հեղափոխական-ժողովրդավարական մարմինները հանդես եկան համապատասխան զննհատականներով և որոշումներով: Բանաձևեր ընդունեցին Կովկասյան բանակի բանակային կոմիտեին, բանվորական, զինվորական և գյուղացիական պատգամավորների (այսուհետև տես բ.գ.գ. - Վ.Ս.) խորհրդի երկրամասային կենտրոնն ու բ.գ. պատգամավորների Թիֆլիսի գործադիր կոմիտեն⁴²:

Անդրկովկասի քաղաքական կենտրոն դարձած Թիֆլիսը, բոլշևիկյան հեղաշրջումից հետո էլ, մինչև Բաքվի խորհրդի ձևավորումը, շարունակում էր գլխավորել երկրամասի հասարակական-քաղաքական անցուղարձը: Հայերի, Կովկասի թաթարների (ադրբեջանցիների) և նրանց կուսակցությունների համեմատ, վրացիներն ի դեմս վրացական մենշևիզմի իրենց համեմատաբար կազմակերպված և նպատակալից դրսևորեցին: Հեղաշրջումից հետո վրացական մենշևիզմի գործելակերպը առավել լիարժեք կերպով արտացոլում է Ն. ժորդանիայի տեսակետներում, ինչը նոր որակ էր կուսակցության մեջ՝ իր պրակտիկ գործունեության իմաստով:

Անդրկովկասի քաղաքական զարգացումների համար վճռորոշ նշանակություն ունեցավ հոկտեմբերի 28-ին Թիֆլիսի քաղաքային Դումայում Ն. ժորդանիայի արտասանած ելույթը⁴³: Նոյեմբերի 2-ին բ. և գ. պատգամավորների խորհրդի Թիֆլիսի բանվորական սեկցիայի և արմիությունների միացյալ նիստում Ն. ժորդանիան հեռատեսորեն նկատեց, որ քաղաքացիական պատերազմն Անդրկովկասում անպայման կվերածվի ազգամիջյան պատերազմի, միտումնավոր կերպով նկատելով, որ կարվեն ռուսական, վրացական ու հայկական զորամասերի հակասությունները⁴⁴:

⁴¹ У. Черчилль, Мировой кризис, Москва-Ленинград, 1932, с. 39.

⁴² Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 1-2.

⁴³ Н.Н. Жордания, За два года, Доклады и речи, Тифлис 1919, с. 48.

⁴⁴ Մշակ, Թիֆլիս, 1917, 29 հոկտեմբերի, թիվ 231:

Հայկական հասարակական-քաղաքական դաշտը՝ Փետրվարյան հեղափոխության ընձեռած անմախառն ակտիվության փորձով հանդերձ հայտնվեց բարդ իրավիճակում, որի ողջ ստեղծարար ու միաժամանակ կործանարար էությունն առայժմ ոչ կուսակցությունները և ոչ էլ հասարակությունը լիովին չէին գիտակցել:

Հայ կադետների «*Հայ ժողովրդական կուսակցությունը*» բոլշևիկյան հեղաշրջումն անվանեց «Քաղաքական եղբայրասպան կռիվ», փաստեց վերջինիս ոչ օրինավոր, անհիմն բովանդակությունն ու նպատակը, մեղադրեց Ա. Կերենսկիի կառավարությանը ժամանակավրեպ գործողությունների, Վ. Լենինին չձեռքակալելու, անվճռականության և դեպքերի հետևից գնալու արատավոր հիմնահարցերում:

«Մշակ»-ի գրեթե բոլոր հետագա արձագանքներում գերիշխում էր հայությանը մտահոգող կենտրոնական հիմնահարցը՝ ռազմաճակատի պաշտպանությունը, Արևմտյան Հայաստանի գեներալ-կոմիսարության հետագա ճակատագիրը:

Հայ հեղափոխական Ռաշնակություն կուսակցությունը եթե հոկտեմբերի 26-ին Պետրոգրադի դեպքերը գնահատում էր որպես «հեղափոխություն», ապա հաջորդ օրը «Հորիզոն»-ը իր խմբագրականը վերնագրեց «Հակահեղափոխական նշարժումը», ինչը նոր լրատվության և դեպքերը սթափ գնահատելու արդյունք էր: Ռաշնակցությունը հանդես եկավ խորհրդային իշխանության հռչակած պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիստական հեղափոխության դեմ: Նա դեռ հույս ուներ, որ Պետրոգրադում խնդիրը կավարտվի փոխադարձ համաձայնությամբ և կկազմակերպվի նոր իշխանություն⁴⁵:

Հեղաշրջումից հետո տեսական, վերլուծական հոդվածաշարով Բաքվի «Գործ» պարբերականում աչքի ընկավ վերջինիս խմբագիր, Հայոց ազգային խորհրդի քարտուղար Արտաշես Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան)⁴⁶: Խորապես գիտակցելով իրողությունը նա հայ հասարակական-քաղաքական մտքի մեջ թերևս լավագույն կերպով հանգում էր բոլշևիկյան հեղաշրջման կործանարար ու ողբերգական դերի գնահատմանը: 1918 թ. փետրվարին «Հորիզոն»-ի հինգ համարներում «Հոկտեմբերեան յեղաշրջումը» հոդվածաշարով հանդես եկավ նաև Ավետիք Շահխաթունյանը: Հեղաշրջումից երեք ամիս հետո հնչած արձագանքը բացատրվում է նրանով, որ Ռաշնակցության մի հատվածը գոնե, հույսեր ուներ («Թուրքահայաստանի մասին» հրովարտակ և այլն - Վ.Մ.), որ խորհրդային կառավարությունը հայանպաստ դիրքորոշում կորդեգրի, հատկապես Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության հարցում: Այդ բեկման արտահայտություններից են բոլշևիկյան հեղաշրջման սնանկության ու կործանարար բնույթի մասին արված հիմնավոր դատողությունները⁴⁷:

Սոցիալիստ-հեղափոխականների (եսեռների) կուսակցության անդրկովկասյան հայկական կազմակերպությունները ելնելով ծրագրային այն դրույթից, որ Ռուսաստանը սոցիալիստական հեղափոխությանը կմոտենա աստիճանաբար, հեղաշրջումը որակեցին, որպես «հեղափոխական ակտ»⁴⁸: «Այժմյան հեղափոխությունը սոցիալիստական չէ, դրա մասին խոսք չի կարող լինել մի

⁴⁵ Մշակ, 27 հոկտեմբերի, թիվ 230:

⁴⁶ Գործ, Բաքու, 1917, թիվ 9-12:

⁴⁷ Հորիզոն, 1918, 1, 4, 8, 13 փետրվարի, թիվ 23, 26, 29, 32:

⁴⁸ Աշխատանքի դրոշակ, Բաքու, 1917, 5 նոյեմբերի, թիվ 18:

երկրում, ուր 80%-ը անգրագետ են և քաղաքացիորեն անպատրաստ»,- գրում էր կուսակցության օրգան «Աշխատանքի դրոշակ» պարբերականը⁴⁹:

Հեղաշրջմանը արձագանքեցին նաև հայկական մյուս հոսանքներն ու կուսակցությունները, ինչպես և արևմտահայության շահերի պաշտպան «Հայաստան» թերթը, որը նկատեց, որ կենտրոնին բնորոշ և սպասվող քաղաքացիական պատերազմը Անդրկովկասում շատ հեշտ կարող է վերածվել ազգամիջյան կռվի⁵⁰:

Բոլշևիկյան հեղաշրջման նկատմամբ հատուկ վերաբերմունք դրսևորեցին Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում տեղակայված բանակի հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները, մարմինները, հրամանատարական կազմը: Կովկասյան բանակի արձագանքների և գնահատականների առանձնահատկությունն այն էր, որ այդ հարցում չկար միատարրություն, անգամ առանձին զորամասերում:

Երկրորդ ենթագլուխ - Իշխանության կազմակերպման հարցն Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը:

Բոլշևիկյան հեղաշրջման արձագանքներն Անդրկովկասում և տարաբնույթ քաղաքական ատյաններում վերջինիս նկատմամբ դիրքորոշման կայացումը պարունակում էր իշխանության համար պայքարի բովանդակություն: 1917 թ. հոկտեմբերին Անդրկովկասում վերջնականապես ձևավորվեցին իշխանություն կազմակերպելու երկու կենտրոններ՝ Բաքուն և Թիֆլիսը: Բաքվում հոկտեմբերի 26-ին էսեռների, մենշևիկների և Դաշնակցության առաջարկով ստեղծվում է «Հասարակական անվտանգության Բաքվի հեղափոխական կոմիտե»⁵¹: Հաջորդ օրը բոլշևիկների նախաձեռնությամբ և Ստ. Շահունյանի նախագահությամբ հրավիրվում է Բաքվի խորհրդի ընդլայնված նիստ, որտեղ հաղթում է հեղափոխական-դեմոկրատական կուսակցությունների միացյալ խմբավորումը (258-ը 149 ձայնի դեմ)⁵²:

Նոյեմբերի 7-ին «Սուսավաթ» կուսակցության Բաքվի կոմիտեն բանաձև ընդունեց քաղաքական դրության մասին, որով գործնականորեն մուտք գործեց Անդրկովկասի մեծ քաղաքականություն: Մահմեդական ֆեդերալիստների ազգային կուսակցությունը հեղաշրջման առաջին շրջանում պաշտպանում էր բոլշևիկներին, ազգությամբ հայ Ստ. Շահունյանին և գտնում, որ Հասարակական անվտանգության կոմիտեի մարտավարությունը վնասակար է հաշտության և համաձայնության քաղաքականության համար⁵³: Այսպես թաթարական ազգային կուսակցությունը մարտահրավեր էր նետում Անդրկովկասի առավել ազդեցիկ ազգային ուժերին և առաջմ իրեն ապահով էր զգում բոլշևիկների հետ, հատկապես Բաքվում՝ անվիճելի հզոր Դաշնակցության հետ մրցակցության պայմաններում: Բաքվում գրեթե նույնությամբ ինչպես և Պետրոգրադում՝ բանակի վճռական դերակատարման շնորհիվ և խաղաղ ճանապարհով մինչև նոյեմբերի 5-ը իշխանությունն անցավ բոլշևիկներին: Անդրկովկասում սկիզբ է դրվում իշխանության խորհրդային այլընտրանքին:

Թիֆլիսում իշխանության հիմնահարցն ընթացավ մի քանի փուլերով: Հոկտեմբերի 28-ին ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան երկրամասային և Թիֆլիսի կոմիտեների

⁴⁹ Նույն տեղում:

⁵⁰ Հայաստան, Թիֆլիս, 1918, 12 հունվարի, թիվ 1:

⁵¹ С. Беленький и А. Манвелов, Революция 1917 г. в Азербайджане (хроника событий), Баку, 1927, с. 179.

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում, էջ 195-196:

նախածեռնությամբ ձևավորվեց զինվորների պատգամավորների առաջին բոլշևիկյան կենտրոնական երկրամասային խորհուրդը՝ «Պատգամավորական ժողովը»⁵⁴: Գործող երկրամասային խորհրդին զուգահեռ, դա բոլշևիկյան զորամասերը ներկայացնող խորհուրդ էր⁵⁵: Թիֆլիսի խորհրդի մեծամասնության՝ սոցիալիստական կուսակցությունների խմբավորման համար պարզ էր, որ բանակային բոլշևիկների կողմից ղեկավարվող ժողովը Կովկասի կենտրոնում իշխանությունը զավթելու գիծ էր վարում: Հանդուրժել վերջինիս գոյությունը՝ նշանակում էր իշխանությունը կամուփին հանձնել բոլշևիկներին, ինչը սպասվում էր Բաքվում: Թիֆլիսի խորհուրդը չճանաչեց պատգամավորական ժողովը՝ որպես իրավասու մարմին⁵⁶: Սա առաջին քայլն էր բոլշևիկների խորհրդային իշխանությունը չճանաչելու ուղղությամբ:

Դաշնակցության Թիֆլիսի հատվածը ընդգծելով իշխանության սուր անհրաժեշտության խնդիրը, վերջինս տեսնում էր ոչ թե կռալիցիոն կամ միատարր կառավարությունների, այլ հեղափոխական դեմոկրատիայի մեծամասնության համար նպատակահարմար իշխանության տեսքով: Կոմիսարիատի ձևավորումից, հինգ օր առաջ ՀՀԴ-ը հույս ուներ, որ բազմազգ Ռուսաստանում նոր իշխանությունը կարտահայտվի ազգային խորհուրդների տեսքով, կամ այլ կերպ՝ իշխանության ազգայնացմամբ⁵⁷:

1917 թ. նոյեմբերի 11-ին Թիֆլիսի ժողովրդական տանը կայացած մեծ խորհրդակցությունը (400 մարդ) քննարկեց Անդրկովկասում նոր իշխանության կազմակերպման հարցը⁵⁸: Նիստում պարզվեցին երկու որոշակի քաղաքական հոսանքներ. մենշևիկներն ու էսեռները պաշտպանում էին, իսկ բոլշևիկները դեմ էին իշխանություն ստեղծելու նախագծին: Ակնհայտ է, որ վրացական մենշևիկը որդեգրել էր ժամանակի համար արմատական մարտավարություն, որը բոլշևիկի դեմ պայքարից առավել գերադասում էր Անդրկովկասի անջատումը, հեռացումը Ռուսաստանից:

Նոյեմբերի 12-ին Ե. Գեգեչկորիի նախագահությամբ Թիֆլիսում կայացավ Հասարակական անվտանգության կոմիտեի նիստը⁵⁹, որը անդրկովկասյան կառավարության ստեղծման երկրորդ փուլն է հանդիսանում: Դրան հաջորդում է իշխանության ձևավորման երրորդ՝ վճռական փուլը, երբ լուծվելու էր նոր կառավարության մեջ կուսակցությունների ներկայացուցչության, դրա թվաքանակի խնդիրը: Այս նիստում որոշվեց նաև կառավարության բաժանմունքների կազմը, ինչպես և նոր իշխանության անվանումը, այն է՝ Անդրկովկասյան կոմիսարիատ⁶⁰: Պաշտոնական «Республика» թերթը նշում էր «Անդրկովկասյան ժամանակավոր կոմիսարիատ» անվանումը⁶¹: Հասարակական անվտանգության կոմիտեի ևս մի նիստ կայացավ նոյեմբերի 13-ին, արդեն առանց բոլշևիկների մասնակցության: Որոշվեց կազմակերպել Անդրկովկասյան կոմիսարիատ՝ սոցիալիստական կուսակցությունները ներկայացնող 12

⁵⁴ Кавказский Рабочий, Тифлис, 1917, 1 ноября, N 188.

⁵⁵ Հ.Ս. Մելիքյան, Հոկտեմբերյան հեղափոխությունը և կովկասյան բանակը, Երևան, 1970, էջ 305:

⁵⁶ С.Е. Сеф, Революция 1917 года в Закавказье (Документы и материалы), Тифлис, 1927, с. 322.

⁵⁷ Молот, 1917, 10 ноября, N 32.

⁵⁸ Документы и материалы..., էջ 3-4:

⁵⁹ Հորիզոն, 1917, 14 նոյեմբերի, թիվ 243:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ Республика, Тифлис, 1917, 15 ноября, N 107.

անդամներից: Նոր իշխանության ազգային ներկայացուցչությունը այսպիսին էր՝ 3-ական հայ և վրացի, 2 ռուս, 4 մահմեդական⁶²:

Այսպիսով, 1917 թ. նոյեմբերի 10-14-ի ընթացքում Թիֆլիսում կայացավ անդրկովկասյան նոր կառավարության ձևավորման գործընթացը, որը Բաքվի զարգացումներից հետո հատկապես արագացվեց երկրամասի քաղաքական կենտրոնում: Այնուհետև ընթացավ կառավարության ձևավորման բուն գործընթացը: Նոյեմբերի 15-ին Օզակոնը վայր դրեց իր լիազորությունները⁶³ և նույն նիստում հաստատվեց կոմիսարիատի կողմից իշխանությունը ստանձնելու վերաբերյալ հրամանը⁶⁴:

Կոմիսարիատում չընդգրկվեցին ինչպես հայկական, այնպես էլ վրացական բուրժուազիայի շահերն արտահայտող Հայ ժողովրդական կուսակցության և վրացական ազգային-դեմոկրատական կուսակցությունների ներկայացուցիչները⁶⁵:

Երրորդ ենթագլուխ - Ազգային իշխանության ձևավորման հիմնահարցն Անդրկովկասում:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի իշխանության ձևավորման գործընթացին զուգահեռ նոր բովանդակությամբ բարձրացավ ազգային ինքնակազմակերպման խնդիրը: Ազգային գործոցի դերի բարձրացման, Անդրկովկասում ազգային համերաշխություն հաստատելու ճանապարհով սկզբից և եթ կուսակցությունների կողմից փորձ էր արվում ազգային տեսակետից «կազմակերպված» երկրամասը հակադրել խորհրդայնացված Ռուսաստանին: Կարևորվում էր ազգային հարցի և ազգային իշխանության հնարավոր զուգակցման հիմնահարցը: Կոմիսարիատի պաշտոնական տեսակետն ընդհանուր առմամբ հանգում էր նրան, որ Սահմանադիր ժողովին պետք է ներկայանալ պատրաստի, համաձայնեցված մախագծով, որը քննարկվեր համառուսաստանյան դաշնային հանրապետական միության շահերի տեսանկյունից: Այդ իմաստով բարձր էր գնահատվում երկրամասի ժողովուրդների ազգային համագումարների դերը, որոնք ի վիճակի էին լուծել առկա ազգային և ազգամիջյան տարածայնությունները:

Սկիզբ էր դրվում ազգային տարածքներ ուրվագծելու գործընթացին:

Իշխանության ազգայնացմանն ուղղված որպես գործնական քայլեր պետք է առանձնացնել երկու իրադարձություններ՝ ՀԺԿ և Բաքվի Ազգային հայկական դեմոկրատական կուսակցության միավորումը և վրացական ազգային առաջին համագումարի հրավիրումը: Հոկտեմբերի 28-ին «Մշակ»-ը փաստում էր, որ երկու կուսակցությունների միացումը կայացել է: Բաքվի գործընկերների կողմից Ս. Պապաջանյանի հետ տարվող բանակցությունների ժամանակ ներկայացվել էր ընդամենը մեկ պահանջ-պայման, այն, որ ՀԺԿ-ը այլևս չկոչվի կաղետական, այլ ներկայանա որպես ազգային կուսակցություն⁶⁶:

1917 թ. նոյեմբերին Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքի, ազգային ու ազգամիջյան հարաբերությունների կենտրոնական և ելակետային իրադարձություններից մեկը վրացական ազգային առաջին համագումարի հրավիրումն էր: Վերջինիս քաղաքական որոշումները հիմնականում դարձան երկրամասի ազգային-դեմոկրատական կուսակցությունների ու նաև Անդրկով-

⁶² Молот, 1917, 16 ноября, N 36.

⁶³ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 15, л. 3.

⁶⁴ Նույն տեղում, գ. 116, թ. 12:

⁶⁵ Республика, 1917, 15 ноября, N 107.

⁶⁶ Մշակ, 1917, 28 հոկտեմբերի, թիվ 230:

կայսյան կոմիսարիատի մոտակա մարտավարության, քաղաքական կողմնորոշման, ռազմաճակատի պաշտպանության և այլ կենսական ներքին ու արտաքին հիմնահարցերի գործելակերպի ուղենիշն ու հիմքը:

Համազումարը աշխատեց 1917 թ. նոյեմբերի 19-23-ը թիֆլիսում⁶⁷: Նիստերի դաիլիճում ծածանվում էր Վրաստանի ազգային դրոշը, ինչը վկայում էր անկախանալու, Ռուսաստանից անջատվելու հստակ ուղենիշի մասին՝ արդեն 1917 թ. նոյեմբերի կեսերին: Հայության անուճից համազումարում ելույթ ունեցան Հովհ. Թումանյանը, դաշնակցական Յազջյանը⁶⁸: Վրացի և մահմեդական գործիչների ելույթներում «Վրաստան», «Արևմտյան Անդրկովկաս» անվանումների շարքում բացակայում էր «Հայաստանը», Երևանի մահամզը հորջորջվում էր «Արևմտյան Անդրկովկաս» այն պայմաններում, երբ երեք գլխավոր ազգային ուժերը պարբերաբար իրար հավատարմության երդումներ էին տալիս և վստահեցնում, որ միայն միասնական ջանքերով կարելի է հասնել ազգերի երջանկությանը:

Վրացական ազգային համազումարը կայացրեց հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած քաղաքական փուլի գլխավոր որոշումը, այն է՝ Անդրկովկասի գործնական անջատումը խորհրդայնացված Ռուսաստանից և ազգային հասարակական-քաղաքական, ինչպես նաև զինվորական կյանքի ինքնուրույն տնօրինումը: Կառավարական, կուսակցական, հանրային մակարդակներում թեև առաջադրվում էր ապագա համառուսաստանյան ժողովրդավարական դաշնային հանրապետության կազմում ազգային լայն ինքնավարության պահանջը, սակայն վրացական մենշևիզմի շրջանակներում հետևողականորեն մշակվում էր անկախ ազգային պետականության գաղափարը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին ենթագլուխ - Անդրկովկասյան կոմիսարիատի սոցիալ-տնտեսական, ֆինանսական և կրթական-լուսավորական գործունեությունը:

1917 թ. նոյեմբերի 18-ին Անդրկովկասյան կոմիսարիատը հրապարակեց երկրամասի ժողովուրդներին ուղղված հռչակագիրը⁶⁹: Այն ամփոփում էր անդրկովկասյան նոր իշխանության գործունեության ծրագիրը, սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի հնարավոր վերափոխման ու զարգացումների իր նախանշած ուղղությունները:

Կոմիսարիատի ստեղծման պահին նրա բարձրացրած առաջին երկու հարցերը և կայացրած որոշումները վերաբերում էին Անդրկովկասի ֆինանսներին և հաղորդակցության ուղիների խնդիրներին:

Նոյեմբերի 15-ին Կոմիսարիատը լսում է ֆինանսների նախարարության գծով կոմիսար Խ. Կարճիկյանի զեկուցումը՝ Անդրկովկասում շաքարավազի մենաշնորհային վաճառքի օրենքը տարածելու մասին: Նոյեմբերի 18-24-ի ընթացքում Կոմիսարիատը փորձում էր լուծել կոմիսարությունների իրավասությունների, փոխադարձ կապերի, աշխատանքների ճշգրիտ բաժանման,

⁶⁷ Հորիզոն, 1917, 25 հոկտեմբերի, թիվ 227:

⁶⁸ Республика, 1917, 24 ноября, N 114:

⁶⁹ Республика, 1917, 23 ноября, N 113.

ռազմական իշխանությունների հետ հարաբերությունների հարցերը: Հաստատվում է Թիֆլիսի պաշտպանության պետի հատուկ պաշտոն⁷⁰:

Արդարադատության նախարարության գծով կոմիսար Շ. Ալեքսեն-Մեսխիկի զեկույցի հիման վրա հաստատվում է «բոլոր քաղաքացիների իրավունքների հավասարեցման և քաղաքացիական աստիճանների ու տարբերանշանների վերացման մասին» հռչակագիրը⁷¹, նոյեմբերի 27-ին ընդունվում է 8-ժամյա բանվորական օրվա մասին հռչակագրի նախագիծը⁷²: Աշխատանքի նախարարության գծով կոմիսար Ե. Գեգեչկորիի հունվարի 14-ի հրամանագրով օրենք է ընդունվում այն մասին, որ Անդրկովկասի սահմաններում, ձեռնարկատերերը բանվորների և ծառայողների ընդունման և հեռացման հարցերը լուծեն պրիմիությունների կամ ֆաբրիկա-գործարանային կոմիտեների համաձայնությամբ⁷³: 1918 թ. հունվարի 7-ին կայանում է հատուկ նիստ՝ նվիրված պարենավորման կազմակերպման մասին կանոնադրության նախագծի հարցին: Մենշևիկ կոմիսար Գ. Տեր-Ղազարյանն այս հրատապ ու բարդ հարցը կապում էր Հարավ-Արևելյան Միության հետ⁷⁴:

1918 թ. հունվարի 18-ին ստեղծվում է «Անդրկովկասի տնտեսական խորհուրդ, որի նպատակն էր երկրամասի տնտեսական կյանքի կարգավորման համար ձևավորված բոլոր կազմակերպությունների միավորումը և գործունեության համաձայնեցումը⁷⁵:

Կոմիսարիատի նախագահությունն ահռելի զոււմարներ էր փոշիացնում իր վարչական ապարատի պահպանման և կենսագործունեության նպատակով, մինչդեռ այս ժամանակատվածում միակ վարկը, որ տրամադրվել էր հայերին՝ դա հունվարի 29-ին Երևանի նահանգի վարչության գրասենյակային և տնտեսական միջոցները բարելավելու ուղղությամբ բաց թողնված չնչին վարկն էր՝ 5000 ռուբ. չափով⁷⁶: Բացառություն կարելի է համարել Անդրկովկասում գործող ուսումնական, կրթական հաստատությունների հանդեպ Կոմիսարիատի վերաբերմունքը, ինչը կյանքի մյուս ոլորտների, հատկապես՝ ռազմա-քաղաքական բնագավառի հետ համեմատության մեջ համեմատաբար հավասար և արդար է իրականացվել: Կոմիսարիատի հոգածությունից անթաքույց դուրս էին մնում նաև երկրամասի հայկական հոգևոր հաստատություններն ու դրանց կից կրթական օջախները⁷⁷: Երկրամասի տնտեսությունը բարեկարգելու, նոր հիմքերի վրա կառուցողական գործունեություն ծավալելու ասպարեզում կարևորվում է նաև Անդրկովկասի դրամական նոր միավորի ստեղծման հարցը: 1918 թ. հունվարի 29-ին ընդունվում է Անդրկովկասյան կոմիսարիատի՝ Բոնների մասին կանոնադրությունը⁷⁸: Կոմիսարիատի որոշման համաձայն, նոր թղթադրամները պետք է մակագրվեն «Бонны Закавказского Комиссариата» և հավասար ուժ էին ունենալու մյուս վարկային թղթադրամների հետ զուլգահեռ⁷⁹:

⁷⁰ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 116, лл. 23, 27, 34, 36, 37:

⁷¹ Նույն տեղում, л. 37-38:

⁷² Նույն տեղում, л. 43:

⁷³ ՀԱԱ, ֆ. 220, ց. 1, գ. 1, թ. 2:

⁷⁴ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 5, 7.

⁷⁵ Кавказское Слово, 1918, 19 ноября, N 14.

⁷⁶ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, лл. 16, 17, 19, 22, 23, 26, 27, 32, 38.

⁷⁷ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 27:

⁷⁸ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 84, թ. 4:

⁷⁹ Հորիզոն, 1918, 3 հունվարի, թիվ 1:

1917 թ. դեկտեմբերի 22-ի որոշման համաձայն 1918 թ. հունվարի 3-ին Կոմիսարիատին կից ստեղծվում է Փոքր խորհուրդ՝ Գ. Ռցխիլաձեի նախագահությամբ: Փոքր խորհրդի ձևավորումը մի կողմից պայմանավորված էր Կոմիսարիատը մեծ քանակությամբ գործերից բեռնաթափելու անհրաժեշտությամբ՝ նրան նաև օրենսդրական գործունեության ասպարեզ տրամադրելու նպատակով, մյուս կողմից՝ Փոքր խորհուրդը իր որոշակի իրավասությունների շրջանակներում պետք է արագացներ այն ընթացիկ հարցերի լուծումը, որոնք չէին պահանջում առաջնակարգ օրենսդրական բնույթի որոշումների հրապարակում⁸⁰: 1918 թ. հունվարի 1 – մարտի 15-ի ընթացքում Փոքր խորհուրդը հրավիրել է 24 պլենար նիստ, որտեղ ընդունվել են 146 որոշումներ՝ կապված Կոմիսարիատի տաս գերատեսչությունների աշխատանքների հետ⁸¹:

1918 թ. սկզբին Կոմիսարիատը քննարկում է նաև մի շարք կոմիսարությունների 1917 թ. նոյեմբերի 15 - 1918 թ. հունվարի 15-ը ընկած ժամանակահատվածի հաշվետվություններ⁸²: Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից 1917 թ. նոյեմբերից 1918 թ. ապրիլ ամիսների ընթացքում բարձրացրած և համեմատաբար լայն ու համակողմանի քննարկումների առարկա դարձած հարցերի շարքում առանձնանում է Դոդային օրենքի ընդունման հիմնախնդիրը: Անդրկովկասյան կոմիսարիատը, որն ի սկզբանե երկրամասի հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների դաշինք էր, Սահմանադիր ժողովի նախաշեմին ամեն զնով ցանկացավ բազմաշերտ հողային սեփականության և հարաբերությունների տեր երկրամասը՝ այն էլ ժողկոմխորհի հռչակագրից հետո, հակադրել բոլշևիզմին, Խորհրդային Ռուսաստանի համապատասխան հռչակագրին և իր կարծիքով ճիշտ լուծում առաջադրեց հողային հարցի համար: 1917 թ. դեկտեմբերի 16-ին Կոմիսարիատը Դոդագործության և Արդարադատության կոմիսարությունների հեղինակմամբ հրապարակեց օրենք՝ «Պետական, նախկին ուղելային, եկեղեցական, վանքապատկան, իրավաբանական անձանց և մասնավոր սեփականատիրական հողերը Դոդային կոմիտեներին հանձնելու մասին»⁸³: Որոշակի չափաբաժնից ավելին լինելու դեպքում հիշյալ կատեգորիայի հողերը բռնագրավվում էին նրանց տերերից և հանձնվում հողային կոմիտեներին, ձևավորելով երկրամասային հողային ֆոնդ: Այդ ֆոնդից հող էին ստանալու կարիքավոր գյուղացիները⁸⁴: Ինչ-որ առումով օրենքը կրկնում էր հողի մունիցիպալիզացիայի մենշևիկյան ծրագիրը, որը ընդունվել էր 1917 թ. ամռանը Անդրկովկասի գյուղացիական համագումարներում: Իրականում Անդրկովկասում իրականացվում էր հողերի բռնագրավում, լիովին անհասկանալի բոլշևիկյան «ազգայնացում»:

Հայ իրականության համար Դոդային օրենքը, բացի զուտ գյուղացիական-սոցիալական բովանդակությունից, նաև ազգային վտանգ էր պարունակում: Բացառվում էր, որ մահմեդականներն իրենց հսկայական կալվածքները կամավոր կերպով համայնացնեին: Դեռ նոյեմբերի 2-ին, մինչև օրենքի հրապարակումը, Ամենայն Հայոց կաթողիկոս Պետրոս Ե Տփղիսեցիին հանդես եկավ Դոդային կոմիտեի կողմից վանքապատկան և եկեղեցական բոլոր հողերի բռնագրավման

⁸⁰ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 274, л. 2.

⁸¹ Նույն տեղում, լ. 12:

⁸² Նույն տեղում, լ. 12, լլ. 37, 39, 40, 50, 52, 61:

⁸³ Сборник законов, инструкций и разъяснений по Министерству Земледелия, Тифлис, 1918, с. 42.

⁸⁴ Земельные законы Закавказского правительства, Тифлис, 1918, с. 14-17.

(աշխարհականացման) դեմ բողոքով⁸⁵: Կաթողիկոսի բողոքից հետո Հողային օրենքի դեմ ավելի համարձակ արտահայտվեցին ՀԺԿ-ը, «Հայաստան» թերթը, «Վան-Տոսպը, պարսկահայությունը՝ ի դեմս Ատրպատականի պատգամավորական ժողովի, Ալեքսանդրապոլի «անկուսակցական սոցիալիստները», Բաքվի Միջկուսակցական մարմինը՝ այդպիսով նաև դաշնակցականները և հատկապես գավառի ՀՀԴ ներկայացուցիչները⁸⁶:

Կոմիսարիատն իր կառավարման ընթացքում հասցնում է մասնակի բարեփոխումներ իրականացնել նաև երկրամասի կրթական-լուսավորական բնագավառում: Առաջին հերթին խոսքը վերաբերում է կրթական ծրագրերում ազգային լեզուների, ազգային առարկաների ներդրմանը: Հունվարի 29-ին Կոմիսարիատը հաստատում է լուսավորության նախարարության գծով կոմիսար Ֆ. Խան-խոյսկիի զեկույցի նախագիծը՝ Անդրկովկասի միջնակարգ ուսումնական հաստատություններում և բարձրագույն ուսումնարաններում ազգային առարկաների դասավանդման վերաբերյալ⁸⁷:

Երկրորդ ենթազուխ - Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեության հասարակական-քաղաքական ոլորտը:

Անդրկովկասում իշխանության համար պայքարի առանձնահատուկ դրսևորումներից պետք է համարել զուգահեռ Քաղաքային դումաների և Սահմանադիր ժողովի ընտրությունները: Անդրկովկասում ևս ընտրություններն ընթացան երկու փուլով: Առաջին փուլն ընդգրկում էր երկրամասի խոշոր քաղաքների դումաների ընտրությունները: Բաքվում և Թիֆլիսում միաժամանակ ընթանում էին նաև բանվորական պատգամավորական խորհուրդների ընտրություններ: Այսպես Բաքվի բ.պ. խորհրդի ընտրությունները կայացան 1917 թ. հոկտեմբերի 22-ին, իսկ Քաղաքային դումայինը՝ հոկտեմբերի 29-ին⁸⁸: Երկու ընտրությունների ընթացքն ու արդյունքները լիովին արտացոլում էին արդյունաբերական, բանվորական քաղաքում տիրող տրամադրությունները, միաժամանակ նաև ազգային գործոնի դերը: Բանվորական խորհրդում առավել քանակությամբ ձայներ ստացել էր ՀՀԴ-ը՝ 6886, էսեռները՝ 4992, բոլշևիկները՝ 4082, մենշևիկները՝ 1005 ձայն: Քաղաքային դումայում սոցիալիստական բոլկը ձեռք էր բերել 17.523 քվե, Դաշնակցությունը՝ 12.523, իսկ բոլշևիկները՝ 11.202 ձայն: Ըստ ազգային պատկանելիության, արդյունքը հետևյալ պատկերն էր արտացոլում, հայեր՝ 38, մահմեդականներ-թաթարներ՝ 31, ռուսներ՝ 19, հրեաներ՝ 12, լեհեր՝ 3, վրացիներ՝ 2 հոգի⁸⁹:

Տվյալների համադրման դեպքում ստացվում է հետևյալ պատկերը, այն է՝ Բաքվում և շրջաններում մենշևիկներին ու էսեռներին համակրում էր 23.518, դաշնակցականներին՝ 19.418, իսկ բոլշևիկներին՝ 15.284 մարդ⁹⁰: Եթե մենշևիկներին ու էսեռներին տարանջատենք, ապա ակնհայտ է դառնում, որ ամենից շատ ձայներ էր հավաքել ՀՀԴ-ը և Բաքվում իշխանության համար սպասվող պայքարում որպես գլխավոր քաղաքական հակառակորդ ձեռք է բերում բոլշևիկներին: Դաշնակցությունը գերակշիռ հաղթանակ է տանում Երևանում,

⁸⁵ Մատենադարան, կաթողիկոսական դիվանի արխիվ, ֆ. 1, ց. 20, թղթ. 239, վավերագիր, թիվ 102/1:

⁸⁶ Հայաստան, 1917, 14 դեկտեմբերի, թիվ 174, Վան-Տոսպ, Թիֆլիս, 1917, 3 դեկտեմբերի, թիվ 13, Սշակ, 1917, 23 դեկտեմբերի, թիվ 269:

⁸⁷ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 86.

⁸⁸ Արև, 1917, 3 նոյեմբերի, թիվ 233:

⁸⁹ Արև, 1917, 1 նոյեմբերի, թիվ 231:

⁹⁰ Նույն տեղում, 3 նոյեմբերի, թիվ 233:

Ալեքսանդրապոլում, Ախալցխայում, Նոր Բայազետում, Գորիսում, Իգդիրում, Արդվինում: Հատկանշական է նաև, որ Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Նոր Բայազետի քաղաքագլուխներ, Գանձակի քաղաքագլխի օգնական, Երևանի Ալեքսանդրապոլի քաղաքային դումաների նախագահներ են ընտրվում դաշնակցականներ: Քաղաքային դումաներում ընտրվել էին նաև Ա.-Դ. Հնչակյան, վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների ու ազգային-դեմոկրատական կուսակցությունների, Մուսավաթի և այլոց ներկայացուցիչներ⁹¹:

Սահմանադիր ժողովի ընտրություններն Անդրկովկասում մեկնարկում են նոյեմբերի 12-ին՝ Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորման գործընթացին զուգահեռ: Քաղաքներում ընտրությունները կայացան նոյեմբերի 24-26-ը⁹²: Բաքու քաղաքի և բանվորական շրջանների 178.038 թվից քվեարկությանը մասնակցել էին 108.208 հոգի, որից ձայների մեծամասնություն ստացել էին՝ առաջին տեղում՝ բոլշևիկները, երկրորդ՝ Մուսավաթը, երրորդը՝ Դաշնակցությունը, չորրորդ՝ էսեռները, հինգերորդ՝ կադետները, ապա և նյունները: Քաղաքում ՀՀԴ զբաղեցնում էր բոլշևիկներից հետո (16.868) երկրորդ տեղը՝ 12.712 ձայնով, իսկ գործարանային շրջաններում՝ երրորդ տեղը (7.602), Մուսավաթից (12.074) և էսեռներից (8.896) հետո⁹³: Թիֆլիսի պատկերը միանգամայն այլ էր: Նոյեմբերի 18-ի տվյալներով առաջին հինգ տեղերը համապատասխանաբար զբաղեցրին. 1. մենշևիկները՝ 31.290, 2. ՀՀԴ՝ 19.595, 3. բոլշևիկները՝ 19.172, 4. էսեռները՝ 11.504 և 5. կադետները՝ 9.565 ձայնով⁹⁴:

Սահմանադիր ժողովի ընտրությունները Կովկասյան ռազմաճակատում և օկրուգի թիկունքային զորամասերում նույնպես կայացան 1917 թ. նոյեմբերին: Քվեարկությանը մասնակցած զինվորների թիվը կազմում էր 420 հազար մարդ:

Անդրկովկասի ազդեցիկ կուսակցությունները Սահմանադիր ժողովի ընտրարշավին նախապատրաստվում էին ծրագրային դրույթներով և մարտավարությամբ, սակայն Սահմանադիր ժողովի գաղափարը և գործընթացը, նոր՝ Խորհրդային վարչակարգին հակադրվելու միակ ու ծանրակշիռ հույսը թե՛ Ռուսաստանում և թե՛ Անդրկովկասում ապրեց ընդամենը մեկ ամիս. Սահմանադիր ժողովը ցրվեց: Թիֆլիսում հիմնվում է Կովկասյան ազգամիջյան սոցիալիստական բյուրո՝ Սահմանադիր ժողովը պաշտպանելու նպատակով:

Երրորդ ենթազույգ - Անդրկովկասյան իշխանության ազգային քաղաքականությունը երկրամասի վարչական սահմանաբաժանումների և զենստվոների հարցում. Ապագա Հայաստանի խնդիրը

Կոմիսարիատի գործողությունների ծրագրում առանցքային տեղ է զբաղեցնում զենստվոների՝ տեղական ինքնակառավարման մարմինների կազմակերպման խնդիրը: Այն ուղղակիորեն առնչվում է Անդրկովկասի նոր վարչա-տարածքային բաժանման, էթնիկ-ազգային սահմանների տարանջատման հետ: Ենթազույգում համառոտ ներկայացվում է հարցի նախապատմությունը՝ սկսած 1916 թ. մարտից և Փետրվարյան հեղափոխությունից⁹⁵: Գաղափարական և կազմակերպական հարուստ հենքի վրա 1917 թ. նոյեմբերի 24-ին Կոմիսարիատի

⁹¹ С. Сеф, Революция 1917 г. в Закавказье, с. 283-285:

⁹² ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 116, л. 4.

⁹³ Արև, 1917, 2 դեկտեմբերի, թիվ 247:

⁹⁴ Տե՛ս Հորիզոն, 1917, 18 նոյեմբերի, թիվ 247:

⁹⁵ Г.М. Туманов, Организация земства в Закавказье, Тифлис, 1918, с. 3; Կ. Սելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Երևան, 1997, էջ 114-120:

խորհրդակցությունը որոշեց հատուկ դեկրետով ողջ Անդրկովկասի վրա ամմիջապես տարածել զենստվոյական ինքնակառավարում⁹⁶: Ազգային քաղաքական ուժերի միջև ծավալվեց սուր պայքար երկրամասի այսպես կոչված «վիճելի» և «անվիճելի» շրջանների էթնիկ-ազգային պատկանելության շուրջ:

Չոչակագրի ընդունումից հետո Կոմիսարիատը ձեռնամուխ եղավ Անդրկովկասում զենստվոյական ինքնակառավարման գործընթացի ներդրման երկրորդ փուլի կազմակերպմանը: Այդ նպատակով նոյեմբերի 30-ին ՆԳ նախարարության գծով կոմիսարիատն կողմից ձևավորվում է հատուկ հանձնաժողով՝ Ն. Կելարևի նախագահությամբ: Հանձնաժողովի հիմնական նպատակն էր զենստվոյահն հաստատությունները համակարգող կանոնադրության մշակումը: 1917 թ. դեկտեմբերի 2-ից սկսված խորհրդակցությունն իր թվով 13 նիստերն ավարտեց 1918 թ. հունվարի 14-ին⁹⁷, որի արդյունքում համառուսաստանյան զենստվոյական շարժման և ժամանակավոր կառավարության իրականացրած գաղափարական և կազմակերպական հենքի վրա ստեղծվեց «Անդրկովկասի զենստվոյահն հաստատությունների ժամանակավոր կանոնադրությունը»⁹⁸: Այն ընդունվեց 1918 թ. հունվարի 25-ին՝ Ն. Կելարևի կողմից ներկայացված կանոնադրության նախագծի քննարկումից հետո⁹⁹:

Նոր կանոնադրությամբ նկատելիորեն ընդլայնվում էր զենստվոյական հաստատությունների իրավասությունը: Հատուկ կանոնների հիման վրա նրանց տրվում էր իրար միջև պայմանագրեր կնքելու, միություններ ձևավորելու, համագումարներ հրավիրելու իրավունք: Ձեռնտվոյական ժողովների ձայնատուների թվի ցուցակում վերջնականապես չներգրավվեցին վիճելի համարվող երևանի նահանգը, Ելիզավետպոլի նահանգից՝ Նուխին և Արեշը: Ինչ վերաբերում էր Թիֆլիսին, ապա նա գավառային զենստվոյի կարգավիճակից անցավ հատուկ վարչական միավորի կարգավիճակին:

Ի լրացումն կանոնադրության՝ հրապարակվում են նաև «Անդրկովկասում զենստվոյական հաստատությունների ժամանակավոր կանոնադրության գործարկման կանոնները» և «Ձայնատուների ընտրության իրականացման մասին հրահանգը», որոնցով պետք է առաջնորդվեին նահանգային և գավառային գործադիր կոմիտեները¹⁰⁰:

Ռուսաստանում 19-րդ դարի կեսերից սկիզբ առած զենստվոյահն շարժումը, Անդրկովկասում փաստորեն լուծում էր ստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո, այսինքն՝ կայսրության փլուզման և դաշնային ժողովրդավարական հանրապետության կայացման միջև ընկած ժամանակահատվածում, երբ նախկին կայսրության ազգային շրջաններն օբյեկտիվորեն անջրպետվելով բոլշևիզմից, մի կողմից արագացնում էին անջատողական, ազգային անկախությունների ձեռք բերման գործընթացը, մյուս կողմից՝ զենստվոյական շարժումը, որպես ժողովրդավարական գործընթաց համարում էին խորհրդային իշխանության դեմ պայքարի պասիվ ձև, հակադրվում էին ժողկոմխորհի կառավարությանը:

Եթե զենստվոյական հաստատությունների ներդրումը Ռուսաստանի նահանգներում հիմնականում սոցիալ-տնտեսական, հասարակական խնդիրների լուծում էր հետապնդում, ապա Անդրկովկասի ազգային բազմաշերտ

⁹⁶ ЦГИА Грузии ф. 1, оп. 2, д. 12, л. 37.

⁹⁷ Временное положение о земских учреждениях в Закавказье, Тифлис, 1918.

⁹⁸ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 59.

⁹⁹ Նույն տեղում, ք. 89:

¹⁰⁰ Г.М. Туманов, նշվ. աշխ., էջ 6:

միջավայրում, զեմստվոյական քաղաքականությունն ի դեմս Կոմիսարիատի դիրքորոշման, առավելապես վերածվում էր երկրամասի վարչական սահմանաբաժանումների, այլ խոսքով՝ ազգային տարանջատման հիմնահարցի: Կառավարության վրաց-մահմեդական ղեկավարության բացահայտ հակահայկական քաղաքականության պատճառով սկիզբ էր դրվում ազգամիջյան գործնական հակամարտությանը:

Առաջին անգամ հայ հասարակական-քաղաքական ուժերը, հատկապես Դաշնակցությունը և Կոմիսարիատի հայ պաշտոնյաները գործնականում ականատես եղան վրաց-թաթարական հարձակողական մարտավարությանը: Անկախ իրադարձությունների զարգացումից, վրացական և թաթարական շրջաններում մտցվեց զեմստվո, իսկ հայկական տարածքները համարվեցին «վիճելի», զեմստվո չմտցվեց:

Չորրորդ ենթագլուխ - Անդրկովկասյան կոմիսարիատի ռազմա-քաղաքական, դիվանագիտական գործունեությունը և հայկական կուսակցությունների դիրքորոշումը

Անդրկովկասյան կառավարության գործունեության առանձին ոլորտ է ընդգրկում ռազմա-քաղաքական և դիվանագիտական բնագավառը: Վերջինիս լուսաբանման համար կարևոր աղբյուր է ծառայել Կոմիսարիատի նախագահ և միաժամանակ արտաքին հարաբերությունների նախարարության գծով կոմիսար Ե. Գեգեչկորիի գործունեությանը նվիրված տեղեկանք - հաշվետվությունը¹⁰¹:

Կոմիսարիատի գործունեության առաջին իսկ օրերից բարձրացավ Պարսկաստանում ռուսաստանյան դիվանագիտական առաքելության հետ կապերի հաստատման խնդիրը, որը բուլշևիկյան իշխանությունը չճանաչելու հետևանքով հայտնվել էր լիակատար մեկուսացման մեջ: Բանակցությունների արդյունքում, որպես փոխհարաբերությունների հաստատման նախապայման դրվում էր ժողկոմխորհի իշխանությունը չճանաչելու հարցը¹⁰²:

1917 թ. նոյեմբերից Կոմիսարիատը ներգրավվեց Հարավ-Արևելյան միության հետ բանակցությունների ասպարեզ: Փոխհարաբերությունների հաստատման նախաձեռնությունը պատկանում էր արդեն կազմավորված հակախորհրդային պետական միավորմանը, որը հակաբուլշևիկյան պայքարի միասնական ճամբարում՝ որպես միավորված ռազմա-քաղաքական նոր դաշնակից տեսնում էր իր անմիջական հարևանին՝ խորհրդային իշխանությունը չճանաչած Անդրկովկասյան կոմիսարիատին: Նոյեմբերի 30-ին Հարավ-Արևելյան միությանն անդամակցելու հարցը բացասաբար է լուծվում¹⁰³: Թեև ընդհանուր հակառակորդի՝ բուլշևիզմի դեմ պայքարում վրացական դիրքորոշումը ենթադրում էր հակախորհրդային հզոր խմբավորման հետ համաձայնության կայացում, սակայն ազգային-տարածքային տարանջատման առաջնային խնդիրը բենեռային հակասություն էր առաջացնում միավորման հարցում, այն է հակառուսական տրամադրությունների պարագայում: Հայությանը ձեռնտու էր ռուսական ներկայությունը Անդրկովկասում և գրավյալ Արևմտյան Հայաստանում՝ անգամ բուլշևիզմի տեսքով, իսկ վրաց-թաթարական դաշինքի համար այդ ներկայությունը գլխավոր խոչընդոտն էր Ռուսաստանից հեռանալու և նոր դաշնակիցների աջակցությամբ՝ անկախության ու այդպես նաև տարածքային ձեռքբերումների ճանապարհին:

¹⁰¹ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 55:

¹⁰² Նույն տեղում:

¹⁰³ Նույն տեղում, գ. 116, թ. 53:

Ռուսաստանից անջատ գործելու առաջին գործնական քայլը տեղի ունեցավ Կոմիսարիատի ձևավորումից և հայտարարության հրապարակումից երկու օր անց՝ ի դեմս նոյեմբերի 17-ին թուրքական հրամանատարության զինադադարի առաջարկի: Մեր կողմից բացահայտվել է Երզնկայի զինադադարի գործընթացում Կոմիսարիատի վարած հակասական քաղաքականությունը: Խնդիրն այն է, որ նոյեմբերի 23-ին Կոմիսարիատի միտքը քննում է դաշնակից պետությունների հյուպատոսների կողմից հրատարակված բողոքը: Այնտեղ գայրույթ էր հայտնվում այն մասին, որ առանց դաշնակից կառավարությունների իրազեկության, Կովկասյան ռազմաճակատում թուրքական բանակի հրամանատարության հետ զինադադարի պայմաններ են մշակվում¹⁰⁴: Հանգամանորեն քննարկել ենք նաև զինադադարի և հաշտության առաջարկի վերաբերյալ հայկական կուսակցությունների ու հոսանքների արտահայտած ոչ միանշանակ վերաբերմունքը: Նրանց շարքում արմատական ընդդիմադիր կեցվածք որդեգրեց Հայ ժողովրդական կուսակցությունը¹⁰⁵:

ՀԺԿ առանձնահատուկ կերպով կարևորում էր այն հանգամանքը, որ անջատ հաշտությամբ, որին փաստորեն Կոմիսարիատի կազմում մասնակցում էին նաև հայերը՝ հայկական տարրը դեմ էր գնում դաշնակիցների ռազմավարությանը¹⁰⁶:

Անդրկովկասյան կոմիսարիատի 1918 թ. հունվարի 14-ի և 15-ի միտերն ամբողջապես նվիրվեցին թուրքիայի հետ հաշտության խնդրին և արտացոլում էին Սահմանադիր ժողովի ցրումից հետո այդ գործընթացի արագացման տրամադրությունները¹⁰⁷:

ՂԼՈՒԽ ԵՐՐՈՂՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԸ

Առաջին ենթագլուխ - «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը որպես իշխանության համար պայքարի դրսևորում

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո բոլշևիկները հանդես եկան ազգային քաղաքականության և միջազգային դիվանագիտական հիմնահարցերի լուծման սեփական մոտեցմամբ: Դրա նպատակն էր նախ՝ ձևավորել այն մտայնությունը, թե խորհրդային իշխանությունը հանդես է գալիս որպես ռուսական պետության լիարժեք իրավահաջորդ և որը շարունակում է Ռուսաստանի ավանդական արտաքին քաղաքականությունը: Այդ էին փորձում հիմնավորել Ֆրանսիական մեծ հեղափոխության հռչակած ազգերի ինքնորոշման սկզբունքի ընդօրինակումը, ապա և 1917 թ. նոյեմբերի 2 (15)-ին «Աշխատավոր և շահագործվող ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որը գրեթե չէր տարբերվում ժամանակավոր կառավարության ապրիլյան որոշումից:

Սակայն գործնականում նորաստեղծ բոլշևիկյան կառավարությունը առաջին հերթին հրապարակեց ցարական և ժամանակավոր կառավարությունների բոլոր միջազգային գաղտնի պայմանագրերը: Այդպես Խորհրդային իշխանությունը դադարում էր ոչ միայն Ռուսաստանի իրավահաջորդը լինելուց, այլև կորցնում էր միջազգային սուբյեկտի նշանակությունը, ավելին՝ շեղվում էր այդ պետության դարավոր ծավալապաշտական - «ազատագրական» ուղուց, դավաճանում իր հետ անձնուրաց համագործակցության մեջ մտած ժողովուրդներին, առաջին հերթին՝ հայ ժողովրդին:

¹⁰⁴ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 12, л. 32.

¹⁰⁵ Մշակ, 1917, 25, 26, նոյեմբերի, թիվ 252, 253:

¹⁰⁶ Նույն տեղում, 2 դեկտեմբերի, թիվ 257:

¹⁰⁷ ЦГИА Грузии, ф. 1, оп. 2, д. 7, л. 33, Кавказское Слово, 1918, 17 ноября, N 12.

Այն, որ Արևմտյան Հայաստանի խնդիրն ուղղակիորեն առնչվում էր Անդրկովկասում իշխանության հիմնահարցի և այդ համատեքստում Պետրոգրադի կենտրոնական իշխանությունների շահախնդրության ակտիվացման հետ, հիմնավորվում է հետևյալ կերպ. 1. Բուլշևիկների, մասնավորապես Լենին-Տրոցկի-Ստալին եռյակի մարտավարությամբ, ինչը մեր կարծիքով հանգում էր հետևյալին. հնարավորության դեպքում, այսինքն՝ Ստ. Շահումյանի հաջող գործողությունների արդյունքում տեր դառնալ ոչ միայն բուլշևիկյան իշխանությունը չճանաչող Անդրկովկասին, այլև գրաված Արևմտյան Հայաստանին: Դեպքերի ոչ շահավետ զարգացման պարագայում, այն է՝ Կովկասում հակախորհրդային ուժերի համախմբման դեպքում, արդեն Կովկասի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի միջոցով Արևմտյան Հայաստանի հիմնահարցը շահարկել Դաշնակցության արմատականությունը չեզոքացնելու և նրան ոչ այնքան ռուսամետ, որքան բուլշևիկամետ ճամբարում պահելու նպատակով: Այլ խոսքով, հայությանը հուզող կենտրոնական և կենսական հիմնահարցը թե՛ քաղաքական զարգացումների թելադրանքով և թե՛ հեռատես դիվանագիտության արդյունքում կապվում էր Անդրկովկասի իշխանության խնդրի հետ; 2. Ինչպես հայտնի է, Կովկասյան բանակի 2-րդ համագումարում իշխանության և թնթացիկ իրադրության մասին հարցերի վերաբերյալ դեկտեմբերի 21-ին ընդունվեցին բուլշևիկյան բանաձևեր: Ռազմաճակատի կազմալուծման կարևորագույն խնդիրը Ստ. Շահումյանը կապում էր Արևմտյան Հայաստանի հարցի հետ: «Ռուսական զորքերի *անակնկալ* (ընդգծումը մերն է Վ.Ս.) ետ քաշվելը չափազանց ծանր դրություն էր ստեղծում Թուրքահայաստանում: Մենք արդեն գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին»¹⁰⁸: Ստ. Շահումյանն իր «Կովկասյան բանակի երկրային երկրորդ համագումարը» հորվածում վկայում էր, որ ընդունվել է նաև բանաձև «Թուրքահայկական հարցի» մասին¹⁰⁹: Այդ բանաձևում մեծամասնության հասած Կովկասյան բանակի բուլշևիկ և ձախ էսեռ պատգամավորները աջակցության էին հայտնում արևմտահայերի իրավունքներին: Համագումարը հանձնարարում էր նաև խորհրդին, որպեսզի կոչ արվի զորքին՝ մինչև հաշտության ստորագրումը չմերկացնել ռազմաճակատը:

Ռազմաճակատի պահպանումը և վերջինիս տնօրինման խաղաղ անցումը բուլշևիկներին, ուղղակիորեն կապվում էր երկրամասը խորհրդայնացնելու Ստ. Շահումյան ծրագրի հետ և այդպիսով կապվում էր իշխանության հարցի հետ: Հասկանալի է, որ Դաշնակցությունը դժգոհ էր, որ համագումարում անցել էր բուլշևիկյան մոտեցումը, բայց և գոհունակությանը լռում էր, քանի որ այդ բանաձևի հեղինակը և հաղթած կողմի ղեկավարը Ստ. Շահումյանն էր, որը և զործնական քայլեր էր մշակում այդ ուղղությամբ; 3. Ու քանի որ բանակային 2-րդ համագումարը երկրամասում հռչակում էր խորհրդային իշխանություն, մարտահրավեր էր նետում Կոմիսարիատին, ինչպես նաև հաշվի առնելով վերջինիս թշնամական վերաբերմունքը ռուսական զորամասերի նկատմամբ, հասկանալի է դառնում, որ Կոմիսարիատին նետած ձեռնոցը ուղղակի սպառնում էր վերջինիս իշխանության պահպանմանը; 4. Ստ. Շահումյանի անցկացրած հայանպաստ բանաձևն ունի մեկ այլ կողմ: Դա Դաշնակցության և բուլշևիկ Շահումյանի մարտավարության ու նաև ազգային հայկական կուսակցության նկատելի, բայց և ժամանակավոր ազդեցության վկայությունն է: Խոսքը վերաբերում է բանաձևի այն կետին, որ ապագա խաղաղության վեհաժողովում

¹⁰⁸ Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 4, էջ 61:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 69::

նախատեսվում էր, որ պետք է ներկա լինեին հայ դեմոկրատիայի ներկայացուցիչները, այսինքն՝ հենց Ստ. Շահումյանի արտահայտությամբ՝ դաշնակցականները¹¹⁰:

Ստ. Շահումյանի հետ բանակցությունների մասնակից դաշնակցական Յ. Չավրիյանը գրում էր. «Ես միայն աղոթում եմ այն օրվա համար, երբ բոլշևիկները Կովկասում վերջապես այնքան կանրապնդվեն, որ մենք հնարավորություն կստանանք դուրս գալու մուսավաթի և մենշևիկների նվազի տակ պարելու մեր ստորացուցիչ վիճակից, ազատ ծավալել մեր ֆիզիկական հզորությանը և գործունեության ծրագիրը, ազատ և համարձակ անցնելով ռուսական կենտրոնական կառավարության կողմը»¹¹¹: Բանաձևի սկզբունքային նշանակությունը նաև նրանում է, որ այն անուղակի կերպով փաստում է Ստ. Շահումյանի անմիջական մասնակցությունը «Թուրքահայաստանի մասին» հրովարտակի նախաձեռնման ու անցկացման գործին:

Հիմնահարցի հետազոտման պատմության վրա հետադարձ հայացքը նախ՝ փաստում է մի անհերքելի իրողություն, այն, որ թե սփյուռքահայ պատմաբաններն ու հուշագիրները միմյանց մերժելով ու քննադատելով, այնուհանդերձ հրովարտակի ստեղծման հարցում ընդունել են համագործակցության կարճաժամկետ փաստ: Միաժամանակ, չի տրվել այդ գործունեության պատճառների պատասխանը: Եթե խորհրդահայ պատմաբանները հրովարտակի ասպարեզ գալը գլխավորապես կապել են բոլշևիկյան կուսակցության հայանպաստ ազգային քաղաքականության և հայագրի բոլշևիկ գործիչների ու մասնավորապես, Ստ. Շահումյանի, Վ. Տերյանի¹¹² հետ, ապա արտերկրի նրանց գործընկերները նույն հաջողությամբ դա վերագրել են Ռոստոմին, Յ. Չավրիյանին¹¹³ և այլոց, որոնց ակտիվ նախաձեռնությամբ ու միջամտությամբ են գործի անցել նույն Շահումյանն ու մյուսները: Հարկ ենք համարում ընդգծել, որ մինչև այսօր լիովին անտեսվել է երրորդ, մեր կարծիքով՝ գլխավոր դերակատար կողմը: Դա արևմտահայ հասարակական-քաղաքական կազմակերպություններն ու գործիչներն են, որոնք 1917 թ. մայիսին հրավիրված Արևմտահայերի առաջին համագումարից սկսած և հատկապես հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, կովկասահայ իրականության մեջ հետևողականորեն առաջ էին մղում արևմտահայության հետ առնչվող բոլոր հարցերը, այդ թվում և Հայկական հարցը:

Մեր կարծիքով, էական է հրովարտակի բովանդակության հեղինակային պատկանելիության խնդիրը, որի շրջանակը ամփոփվում է Շահումյան-Ռոստոմ-Տերյան եռյակի շուրջը:

«Թուրքահայաստանի մասին» հրովարտակի նախագիծը կոլեկտիվ աշխատանքի արդյունք է, հայ ազգային քաղաքական գործիչների համատեղ փոխզիջումների և համահայկական նշանակություն ունեցող հիմնահարցի շուրջ միավորվելու, համախմբվելու արգասիք: Հռչակագրի հեղինակային պատկանելիության խնդրի շուրջ որոշակի պարզաբանումներ կարող է մտցնել նաև փաստաթղթերի քանակի հարցը: ՀՀ Ազգային արխիվի, Ե. Չարենցի անվան ԳԱԹ-ի տարբեր ֆոնդերից, Պատմության թանգարանի արխիվից մեր կողմից հայտնաբերած տեքստերի օրինակները վկայում են, որ գործ ունենք մի քանի

¹¹⁰ Հորիզոն, 1917, 24 դեկտեմբերի, թիվ 271:

¹¹¹ Լ.Ա. Խուրշուդյան, նշվ. աշխ., էջ 65:

¹¹² Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարան, ֆ. 16, Վ. Տերյան, թղթ. թիվ 286:

¹¹³ Նույն տեղում, թղթ. թիվ 383:

փաստաթղթերի և լրամշակումների հետ: Այդ դեպքում առաջինը թերևս «Թուրքահայաստանի մասին» գրությունն է (Записка о Турецкой Армении)¹¹⁴: Այս նյութը մեր կարծիքով նախորդում է «Записка о Турецкой Армении и проект декрета об Армении»¹¹⁵ և Վ. Տերյանին վերագրվող «Декрет об Армении» փաստաթղթերին¹¹⁶:

Հրովարտակի թերևս միակ գործնական նշանակությունն այն է, որ 1917 թ. իրականության մեջ, Խորհրդային Ռուսաստանը թեև «հակաիմպերալիստական» համատեքստում, սակայն հայ գործիչների ուղղակի և ակտիվ մասնակցության շնորհիվ ճանաչում էր հայ ժողովրդի պատմական-տարածքային իրավունքները Արևմտյան Հայաստանի նկատմամբ և հայկական պահանջատիրությունը:

Երկրորդ ենթագլուխ - Վրաց-թաթարական հակառուսական խռովությունները Անդրկովկասյան երկաթուղու շրջանում և հայկական դիրքորոշումը:

1917 թ. սեպտեմբերին Ելիզավետպոլը (Գանձակ) վերջնականապես ձևավորվեց որպես Անդրկովկասի պանթյուրքիզմի կենտրոն, որտեղ իշխանությունն ամբողջապես գտնվում էր մահմեդական կազմակերպությունների ձեռքին:

1917 թ. նոյեմբերի 18-ին (դեկտեմբերի 1) այստեղ առաջին անգամ բռնկվեցին լայնածավալ անկարգություններ, որի գլխավոր պատճառը՝ մահմեդական զորամասերը զինելու նպատակով երկաթուղային կայարաններում տեղակայված ռուսական զորամասերի զենքի ու զինամթերքի բռնագրավումն էր¹¹⁷: Սկզբում մահմեդական մտավորականներին հաջողվում է կանխել և տեղայնացնել Ելիզավետպոլի աղետը, սակայն շուտով այն ընդգրկում է մինչև Եվլախ հատվածը: «Սա արդեն ավագակություն չէ,- գրում էր «Հորիզոնը»,- ոչ էլ ավերիչ բնագղներով օժտված ու սանձարձակ խուժանի տարերային մի շարժում: Այստեղ երևում է կազմակերպված մի ծրագիր»¹¹⁸: Կոմիսարիատի դեկտեմբերի 22-ի նիստը Ե. Գեգեչկորիի առաջարկով ձևավորում է հատուկ պատվիրակություն, որի կազմում ընդգրկվում են միմիայն թաթար և վրացի պաշտոնյաներ, իսկ որպես «չեզոք» դեմք՝ Ա. Չխենկելին: Ստեղծվում է «Մահմեդական կորպուս», որի հրամանատար է նշանակվում գեներալ Շիխլինսկին¹¹⁹: Ժամանակավոր կառավարության կողմից հետևողականորեն ձգձգվող գործընթացը, երբ հայկական ու վրացական ազգային զորամասերին զուգընթաց՝ չէր խրախուսվում մահմեդական գնդերի ձևավորումը, իրականացավ բուլշևիկյան հեղաշրջումից հետո, չնայած այն հանգամանքին, որ մահմեդական զորամասերի գլխավոր թիրախը հենց բուլշևիկյան Բաքուն և Կովկասյան բանակի նահանջող զորամասերն էին: Սպանդը և զենքի հափշտակումը թաթար դեկավարները հիմնավորում էին հետևյալ կերպ. քանի որ մահմեդականներին իրավունք էին ստացել ունենալ իրենց բանակը՝ Մահմեդական կորպուսը, ուստի և, նրանք պետք է զենք ունենան¹²⁰: Ա.-բ. Սաֆիքյուրդսկին պնդում էր, թե թաթարները լիովին իրավունք ունեն գինաթափել էշելոնները, քանի որ ունեն և. ժորդանիայի ստորագրությունը կրող երկրամասային կենտրոնի հեռագիրը, որն «առաջարկում էր Մահմեդական կորպուսի սպառազինման նպատակով օգտվել անցնող և գինաթափվող

¹¹⁴ ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 899, թ. 17:

¹¹⁵ ՀՀ Պատմության թանգարան, նորագույն պատմության բաժին, Օժ. ֆ., թիվ 1590:

¹¹⁶ Ե. Չարենցի անվ. ԳԱԹ, ֆ. 16, թղթ. 119:

¹¹⁷ ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 26, թ. 21:

¹¹⁸ Հորիզոն, 1917, 24 դեկտեմբերի, թիվ 271:

¹¹⁹ ЦГИА Грузии, ф.1818, оп. 2, д. 141, л. 292.

¹²⁰ Նույն տեղում:

էշելունների գենքից»¹²¹: Այդ էր փաստուն և «Кавказское Слово» թերթը¹²²: Մահմեդական թաթարներին ձեռնտու էր Քանձակի մոտ՝ գյուղացիական խռովությունների կենտրոնում զինաթափել ռուս զինվորներին՝ կալվածատեր-բեկերի դեմ ուղղված սոցիալական տարերային ընդվզումը ճնշելու, Բաքվի օտար խորհրդային իշխանության և հայ բնակչության դեմ պայքարելու համար, վրաց մենշևիկներին այդ նույն զենքն անհրաժեշտ էր առավելապես Թիֆլիսը խորհրդայնացման իրական հեռանկարից զերծ պահելու համար, Դաշնակցությանն էլ, առաջնությունը տալով ռազմաճակատի պաշտպանությանը, համաձայնվում էր զենքի առգրավմանը և այս արդարացված հիմնահարցում օբյեկտիվորեն հակադրվում է Ստ. Շահումյանի բուլշևիզմին:

1918 թ. հունվարի 8-12-ին Ելիզավետպոլի ու Շամխորի մոտ և Բաքու-Թիֆլիս երկաթուղու ամբողջ երկայնքով տեղի ունեցավ ռուս զինվորների զարհուրելի սպանդ, որին միայն Շամխորում զոհ գնացին ու վիրավորվեցին 2000 անգն զինվորներ, գրավվեց 15.000 հրացան, 20 հրանոթ, 70 գնդացիր: Ջարդերի անմիջական ղեկավարները մահմեդական ազգային կոմիտեի անդամներն էին¹²³: Այդ իրադարձությունների պարզաբանման վրա նոր լույս է սփռում Կոմիսարիատի հունվարի 14-ի հիստը, մասնավորապես օդաչու պորուչիկ Ա. Տեր-Մարտիրոսյանի զեկույցը և բազմաթիվ այլ նորահայտ փաստեր¹²⁴:

Ելիզավետպոլի մահմեդական գյուղացիական խռովությունները, ապա և Բաքվից մինչև Թիֆլիս երկաթուղային հանգույցների մոտ կատարված ոճրագործությունները առավել մեծ ու համապարփակ հիմնահարցի՝ երկրամասում իշխանության խնդրի բաղկացուցիչներից են: Կովկասյան ռազմաճակատից հեռացող ռուսական զորամասերի զենքն ու զինամթերքը Անդրկովկասյան կոմիսարիատին և զ. ու բ. պատգամավորական խորհրդի երկրամասային՝ էսեռա-մենշևիկյան կենտրոնին մախ և առաջ անհրաժեշտ էին Բաքվի խորհրդային իշխանության դեմ պայքարելու և Թիֆլիսը խորհրդայնացման վտանգից զերծ պահելու համար: Ելիզավետպոլն ու Շամխորը դարձան 1917 թ. նոյեմբերից սկսված իշխանության համար նդվող անզիջուն, առաջմ դեմոկրատական պայքարի վայրագ հանգուցալուծումներից գլխավորը, երբ զենքի համար պայքարը վերաճեց քաղաքական և ազգամիջյան բացահայտ առճակատման: Արյունոտ դեպքերի գլխավոր մեղսակիցները վրացական մենշևիզմի առաջնորդներն էին և մահմեդական ազգային կոմիտեն, այսինքն՝ Անդրկովկասյան կոմիսարիատում իշխանությունը զավթած վրաց-մահմեդական ազնվականական-խանական մեծամասնությունը:

Չորրորդ ենթագլուխ - Անդրկովկասի խորհրդայնացման Ստ. Շահումյանի ծրագիրը և Կոմիսարիատի քաղաքականությունը:

Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծման պահից, բուլշևիկների կողմից իշխանության գրավման հարցը դարձավ ինչպես Թիֆլիսի երկրամասային կենտրոնի, այնպես էլ Բաքվի խորհրդի առաջնահերթ խնդիրը: Այս գործընթացի առաջին փուլում՝ 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հիմնահարցն առավելապես բարձրացվում էր «հակահեղափոխության դեմ» բուլշևիկների հարթամասի համատեքստում: 1918 թ. հունվար-մարտ ժամանակահատվածում, երբ որոշակի դարձավ երկրամասային իշխանության վրաց-թաթարական

¹²¹ ՀԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 28, թ. 9.

¹²² Кавказское Слово, 1918, 19 ноября, N 14:

¹²³ Հորիզոն, 1917, 22 հունվարի, թիվ 15:

¹²⁴ ЦГИА Грузии, ф. 1818, оп. 2, д. 12, лл. 30-32, նաև՝ գ. Սարգսյանի անձնական արխիվ:

մեծամասնության կողմից հայությանն ու ՀՀ-ը մեկուսացնելու միտումը, ի դեմս Ստ. Շահումյանի, Ռոստոմի՝ Բաքվի իշխանության մյուս հայ գործիչների և նրանց տրամադրության տակ եղած ռազմական ուժի հետ համագործակցությունը ձեռք բերեց թեև ժամանակավոր, բայց ազգային նկարագիր:

Սկզբում Կոմիսարիատի գործողությունները արդարացված էին, ամեն ինչ արվում էր որպեսզի թիֆլիսում չեզոքացվի բուլշևիկների ազդեցությունը: Դրան կարելի էր հասնել, եթե քաղաքից հեռացվեին բուլշևիկյան զորամասերը՝ Կարսյան գունդը, վերահսկողություն հաստատվեր Արսենալի (Ջինապահեստ) վրա և վերացվեր բուլշևիկների կազմակերպությունը: Կոմիսարիատի իշխանության պահպանմանն ուղղված հետևողական, նպատակային քայլերի իրականացումից հետո վրացական մենշևիկներին հաջողվեց իրականացնել բոլոր այդ կենսական խնդիրները:

Թիֆլիսի գրավման հիմնահարցի համատեքստում կարևորում ենք ազգային գործոնի դերը: Բուլշևիկյան կուսակցության նման միակուռ կառույցն անգամ ճեղքեր էր տալիս Անդրկովկասում: Ոչ միայն վրացի մենշևիկներն էին ազգայնական, այլև վրացի բուլշևիկները: Ստ. Շահումյանի գլխավորությամբ և Կովկասյան բանակի՝ հիմնականում ռուս զինվորների աջակցությամբ Թիֆլիսի գրավումը դիտվում էր որպես հակավրացական քայլ, առավելապես ոչ այնքան բուլշևիկների, այլ նախ և առաջ հայկական գործոնի հաղթանակ: Փաստորեն Ստ. Շահումյանի դեմ պայքարում և իշխանության գրավման առաջին փուլում վրացական մենշևիկներն ու բուլշևիկները, հանդես եկան համատեղ: Իհարկե, միտումնավոր կերպով չօգտագործվեց Կովկասյան բանակի բուլշևիկացած զորամասերի վճռական դերակատարությունը և նվիրվածությունը Անդրկովկասում իշխանության գրավման գործին:

1917 թ. նոյեմբերի վերջից Թիֆլիսի իշխանության դեմ պայքարի կենտրոն դարձավ նաև Սարիղամիշը, որտեղ կենտրոնանում էին վերադարձող բուլշևիկացած զորամասերը (30.000 զինվոր): Թիֆլիսի իշխանությունները գիտակցում էին, որ Ստ. Շահումյանի և Սարիղամիշի ՌԿԿ-ի վճիռը քաղաքը գրավելու վերաբերյալ արկածախնդրություն չէր: 1918 թ. հունվարի 18 (31)-ին Թիֆլիսում ռազմական դրություն է հայտարարվում: Նույն օրը երկրամասի կառավարությունը Ե. Գեգեչկորիին օժտում է արտակարգ լիազորություններով՝ նրա տրամադրության տակ դնելով Անդրկովկասի բոլոր զինված ուժերը¹²⁵: Կոմիսարիատը Ա. Չխենկելիին հատկացնում է 60 հազար ռուբլի՝ վրացական ազգային զնդերն ուժեղացնելու նպատակով¹²⁶: Կոմիսարիատին առանձնապես անհանգստացնում էր Ստ. Շահումյանի Թիֆլիս տեղափոխվելու և արտակարգ լիազորություններ ստանձնելու հանգամանքը¹²⁷: Դրանք իշխանության գրավմանն ուղղակի ազդանշաններ էին:

Արտակարգ միջոցներ ձեռնարկելու նպատակով Կոմիսարիատը հունվարի 24-ին (փետրվարի 6) հրավիրեց հատուկ նիստ¹²⁸: Հունվարի 25-ի ողջ նիստը նվիրվեց Ստ. Շահումյանի ձեռքակալության խնդրին¹²⁹: Նա անցավ անլեզավ կարգավիճակի և փետրվարի 20-ին ռազմական էշելոնով վերադարձավ Բաքու:

¹²⁵ Кавказское Слово, 1918, 2 февраля, N 26.

¹²⁶ Նույն տեղում:

¹²⁷ ՀԱԱ, ֆ. 4007, ց. 1, գ. 218, թ. 1.

¹²⁸ ЦГИА Грузии, ф.1818, оп. 2, д. 12, лл. 51-104:

¹²⁹ Նույն տեղում, лл. 101-104:

Այն առանցքային հիմնահարցը, որ ի դեմս Ստ. Շահումյանի, երկրամասային, այդ թվում և Կովկասյան բանակի բոլշևիզմը նույնացվում էր հայամպաստ մարտավարության հետ, որոշակի արտացոլում է ստացել նաև ժամանակի մանուլի օրգաններում, մասնավորապես, վրացական ազգային թերթերում: «Սաքարթվելոն» գրում էր օրինակ. «կարող է պատահել, որ փախչող զորամասերի հետ միանալով, հայերը Շահումյանին ազգի առաջնորդ հռչակեն: Համենայն դեպս մենք պետք է զգույշ լինենք, որ ինտերնացիոնալիզմի դրոշի տակ գլուխ բարձրացնեն մեր հարևան ժողովրդի այն ծայրահեղ շովինիստները, որոնք Շահումյանի հետ միասին, երևի, երազում են «Սեծ Հայաստանը» ստեղծելուն (ընդգծումը մերն է - Վ.Ս.)¹³⁰: Ստ. Շահումյանի ծրագրերը որակվում էին որպես «նեղ ազգայնական իղծ»¹³¹: Այդ խնդրին էին անդրադառնում նաև «Սախալխ Սաքմեն», «Չվենի ռեսպուբլիկան».- «երևակայեցեք, ասում են հայերը, որ Շահումյանը լավ հայ դուրս եկավ»¹³²:

Լուսաբանվել է նաև Դաշնակցության մի խումբ գործիչների և Ստ. Շահումյանի համագործակցության կարճատև դրվագը: Հանգամանորեն վեր են հանվել Ստ. Շահումյանի ծրագրի չիրականացման պատճառները:

Հիմնգործը ենթազուխ - Բաքվի գրավման թուրք-թաթարական առաջին փորձը և հայ քաղաքական ուժերի համերաշխության դրսևորումը:

1918 թ. հունվար-ապրիլ ամիսների ընթացքում երիտթուրքական և թաթար ազգայնականների քաղաքականության գլխավոր թիրախը Կովկասում դարձավ Բաքուն: Քաղաքն ընկալվում էր որպես հայկականության, ռուսական գործոնի և, իհարկե, վերջինիս հետ նույնացվող ոչ ցանկալի խորհրդային իշխանության հզոր հենակետ: Դա մեծապես խոչընդոտում էր պանթուրքիզմի ծավալմանը և Ադրբեջան ազգային պետության ստեղծման ծրագրերին: Բաքվի գրավումը ենթադրում էր ինչպես արտաքին ռազմաքաղաքական, պանթուրքիստական, տնտեսական-նավթային, այնպես էլ միաժամանակ մի խումբ հիմնահարցի ամբողջություն – պայքար իշխանության համար, պայքար բոլշևիզմի դեմ, ուժերի վերադասավորում հօգուտ մահմեդականության և այստեղից էլ՝ հակազդեցություն հայկական տարրին ու նրա քաղաքական ու տնտեսական գերազդեցությանը:

Հետհոկտեմբերյան գրեթե բոլոր հարցերի շուրջ պարտություն ու անհաջողություններ կրելով, ՀՀԴ-ը գոնե վրացական-թաթարական դաշինքի դեմ ձևավորվող իրական գործոն էր սկսում ակնկալել Բաքվի հայամետ խորհրդային իշխանությունը, որը միաժամանակ գերմանո-թուրքական ագրեսիայի դեմ հնարավոր միակ ուժն էր ընկալվում: Այս առումով Դաշնակցության և Բաքվի խորհրդի ժամանակավոր դաշինքը՝ Թիֆլիսի գրավման Ստ. Շահումյանի ծրագրի անհաջողությունից հետո համագործակցության երկրորդ փորձն էր: Առաջին անգամ հանգամանորեն և անաչառ կերպով լուսաբանվել է նաև Բաքվի խորհրդի կազմում Մուսավաթի ներկայացուցիչների ներգրավման հակասական խնդիրը, ինչպես նաև մարտյան իրադարձություններում Մուսավաթի դերակատարության նախադրյալների բացահայտումը¹³³: Մուսավաթի դերակատարության զուգահեռ, Բաքվի իշխանության ու Ստ. Շահումյանի առաջիկա ծրագրերի իրականացման

¹³⁰ Հորիզոն, 1918, 4 փետրվարի, թիվ 26:

¹³¹ Նույն տեղում:

¹³² Նույն տեղում, 7 փետրվարի, թիվ 28:

¹³³ Я. Ратгаузер, Революция и гражданская война в Баку, ч. I, 1917-1918 гг., Баку 1927, У. Մելիք-Եօլչեան, Բազուի հերոսամարտը, Հայրենիք, Պոսթըն, 1925, Գ տարի, թիվ 7, մայիս, Ա. Գիլխանդանեան, Բազուի հերոսամարտը, Հայրենիք, Պոսթըն, 1941, թիվ 9, հուլիս:

համատեքստում կարևորվում է Դաշնակցության հետ և նրա նկատմամբ մշակվող քաղաքականությունը: Այդ գործընթացը տարանջատել ենք մի քանի ուղղությունների, այդ թվում՝ Բաքվի Հայոց ազգային խորհրդի, կուսակցության տեղական կոմիտեի, ինչպես և առանձին գործիչների նկատմամբ ունեցած վերաբերմունքի և իրականացվող քաղաքականության համատեքստում:

Մեր պատմագիտության մեջ առաջին անգամ առանձին և համակողմանի հետազոտման է ենթարկվել Բաքվի Հայոց ազգային խորհրդի գործունեությունը այս փուլում:

Որպես առանձին հիմնահարց վեր է հանվել ՀՀԴ-բուլշևիկներ և ՀՀԴ-Սուսավաթ հարաբերությունների զարգացումը մարտյան իրադարձությունների համատեքստում¹³⁴:

1918 թ. մարտի կեսերին պարզ դարձավ, որ Բաքվում սպասվում է վճռական պայքար ու բախում: Այդ բախման ակունքները նաև Գանձակում էին ձևավորվում: Ատենախոսության այս հատվածում աղբյուրագիտական հենքի և զրականության հիման վրա փորձել ենք ներկայացնել Բաքվի հերոսամարտի համապարփակ, լիարժեք և հնարավորինս անկողմնակալ պատմությունը¹³⁵:

Բաքվի իրադարձությունների կապակցությամբ անդրադարձել ենք հայկական կուսակցությունների և ազգային ու զինվորական գործիչների գնահատականների ու վերաբերմունքի խնդրին: Չայկական քաղաքական դաշտի գլխավոր ժողովրդավարական ուժերը, բացի հայ մենշևիկներից, թերևս առաջին անգամ

¹³⁴ ՂԱԱ, ֆ. 121, ց. 1, գ. 29, թ. 3, 6, 10, ՂԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 916, թթ. 1-2, ֆ. 4047, ց. 1, գ. 124, թ. 1, ԱԳՊԱ ԳՐ, ֆ. 1, օպ. 2, ձ. 13, լ. 194, գ. 124, թթ. 1-3, Ե. Չարենցի անվ. ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, թիվ 66/417, Ա. Չոպանյանի ֆոնդ, թղթ. թիվ 1778, Հորիզոն, 1917, 24 նոյեմբերի, Ժողովուրդ, Երևան, 1918, 18 դեկտեմբերի, Ա. Գիւլխանդանեան, Բազուի հերոսամարտը, Ս. Մելիք-Եօլջեան, Բազուի հերոսամարտը, Ս. Շաթիրեան, Դրուագներ մօտիկ անցեալից, Հայրենիք, Պոսթըն, 1923, թիվ 7, մայիս, Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ., Երևան, ՀՀ պատմության արխիվ, 2003, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, Ռոստոմ, Մահուան վաթսուամենակի առթիւ, Պեյրուք, 1979, Հ.Ա. Ավետիսյան, Գեներալ Հակոբ Բագրատունի (1879-1943) ՊԲՀ, Երևան, 1997, թիվ 1, (145), Ե. Քահ. Գեղամեանց, Տաճիկները Կովկասում և Բազուի անկումը, Երեւան, 1994, Ա. Գիւլխանդանեան, Անդրկովկասը եւ Բազուի դէպքերը, Հայրենիք Պոսթըն, 1967, թիվ 1, հունուար, Մ. Искендеров, նշվ. աշխ., Ե.Ա. Токаряевский, Бакинские большевики — организаторы борьбы против германо-турецких интервентов в Азербайджане в 1918 году, Баку, 1947, Сур. Шаумян, Бакинская Коммуна, Баку, 1927; Շարժում, 1918, 29 մարտի, ՂԱԱ, ֆ. 4007, ց. 1, գ. 228, թ. 1-2, Кавказское слово, Тифлис, 1918, 24 марта, Աշխատավոր, 1918, 25 մարտի, ՂԱԱ ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 12, Ա. Ալշուքեան, Ռոստոմը Բազուում, Հայրենիք, Դ տարի, թիւ 7, (365), հուլիս, 1956, Ronald Grigor Suny, The Baku Commune 1917-1918, New Jersey, 1972, Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թ. Երևան, 1997, Закавказский сейм, Стенографический отчет, заседание 20-е, 24 марта, Тифлис, 1918, Ս. Շաթիրեան, Էջ մը իր հայ-թրքական կրիներէն, Հայրենիք, 1923, սեպտեմբեր, թիվ 11, Հորիզոն, 1918, 29 մարտի, Եղիշէ Պահլաւունի, Յուշամատեան, Երեւան, 2006, Աստվածատուր Խաչատրյան, Արեւելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, ՂԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 104-105, Սշակ, 1918, 30 մարտի, Դ. Անանուհ, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3, (1901-1918), Երեւան, 1926, Լեո, Անցյալից, Երեւան, 2009, Պայքար, Թիֆլիս, 1918, 24 մարտի, 29 մարտի, Աշխատավոր, 1918, 25 մարտի, Լ.Ա. Խուրշուդյան, նշվ. աշխ., ՂԱԱ, ֆ. 1022, ց. 7, գ. 96, թթ. 45, 54, Новое Время, Ереван, 2011, NN 1997, 1998, 2000:

¹³⁵ Ռ. Դարբինեան, Փոթորիկի օրերում, Հայրենիք, ԻՉ տարի, թիւ 1(264), Պոսթըն, յունուար, 1948, Բ. Իշխանեան, Հակայեղափոխական շարժումը Անդրկովկասում, Բաքու, 1918, Бакинская рабочий, Баку, 1917-1918, Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 4, Երևան, 1978 և այլն:

իրենց կուսակցական գործունեության մեջ՝ մեծ նվաճում ու հաղթանակ որակեցին հայկական ազգային-քաղաքական կոալիցիայի ձևավորումը Բաքվում, առանց շեշտադրելու այդ համագործակցության մեջ ԶԳԴ-բոլշևիկներ համատեղ հանդես գալու փաստը: Բաքվում 1918 թ. մարտ-ապրիլ ամիսներին սկիզբ էր դրվում այն համազգային քաղաքական տանդեմին՝ ի դեմս մեծ հաշվով Ստ. Շահունյան - Ռոստոմ - Զ. Բագրատունի եռյակի, որն իսկապես Անդրկովկասի հայությանը կարող էր դուրս բերել պարտվողի, կարգավիճակից և հեռանկարում լուծեր Զայկական հարցը (գոնե Արևելահայ հատվածը):

Առանձին լուսաբանման է ենթարկվել Բաքվում «քաղաքացիական պատերազմի» խնդիրը, ինչը ուղղակիորեն առնչվում է իշխանության հարցի հետ:

Բաքվի դեպքերը մեր կարծիքով անհրաժեշտ է քննարկել ու մեկնաբանել նաև Զայկական հարցի համատեքստում, այն առումով, որ Բաքվի հայկական զինուժը բացի Բաքու քաղաքից ուներ մեկ այլ առավել կենսական գերնպատակ՝ աջակցել Արևմտյան Զայաստանի ինքնապաշտպանությանը, դրանով նաև կանգնեցնել թուրքական արշավանքը ինչպես Արևելյան Զայաստան, այնպես էլ՝ Բաքու:

Վեցերորդ ենթագլուխ - Երևանը և Երևանի նահանգը Զոկտեմբերյան հեղաշրջումից հետո:

Զոկտեմբերյան հեղաշրջումից հետո Երևանի նահանգում և նրա կենտրոն Երևան քաղաքում սկիզբ դրվեց քաղաքական մի գործընթացի, որն առանձին փուլերով շարունակվեց մինչև 1918 թ. հունիսը: Երևանը հանդես եկավ որպես հայության ինքնության ազգային համախմբվածության կիզակետ, և աստիճանաբար վերածվեց Անդրկովկասի հայկական քաղաքականության կենտրոնի:

Նոյեմբերի 16-ին Երևանում կայանում է նահանգային գործադիր կոմիտեի նիստը, ձևավորվում է նախագահությունը¹³⁶: Այն շնորհավորում է Անդրկովկասի նոր իշխանությանը և որոշում Կոմիսարիատի ձևավորման սկզբունքների հիման վրա վերակառուցել նաև նահանգային իշխանությունը¹³⁷:

Նահանգի և քաղաքի առաջնային կենսական խնդիրը առաջին անհրաժեշտության մթերքների, հատկապես հացի ապահովման հարցն էր: Նոյեմբերի 9-ին (22) Երևանում կայանում է նահանգային պարենային վարչության նիստը՝ Ա. Խաչատրյանի նախագահությամբ, Երևանի քաղաքագլուխ Թ. Տոշյանցի և պարենային վարչության անդամների մասնակցությամբ, որտեղ լսվում է նահանգի պարենային իրավիճակի հարցը, լուծումներ են առաջարկվում¹³⁸:

Խորացող անարիսիայի, անիշխանության երևույթների պատճառով Անդրկովկասյան կոմիսարիատը, հետո էլ Սեյնը փորձում էին նկատելիորեն բարձրացնել միլիցիայի ջրկատների դերակատարությունը: Այդ գործընթացը շարունակվում է մինչև 1918 թ. ապրիլի 13-ը (26), երբ Երևանի նահանգի ղեկավարությունը տեղեկացվում է Սեյնի ընդունած օրենքի մասին, ըստ որի ցրվում էր միլիցիայի պահեստազորը և ելնելով ռազմական դրությունից այն ժամանակավորապես (6 ամսով) վերակազմավորվում էր հատուկ հեծյալ ջրկատների¹³⁹: Ներկայացվում է նահանգի վարչական կառուցվածքը¹⁴⁰: Երևանի

¹³⁶ Ջանգ, 1917, 19 նոյեմբերի, թիվ 4:

¹³⁷ Молот, Тифлис, 1917, 21 ноября, N 40:

¹³⁸ ՀԱԱ, ֆ. 220, ց. 1, գ. 73, ք. 48-52, ֆ. 103, ց. 1, գ. 77, ք. 65-66, գ. 111, ք. 2, 3, 10:

¹³⁹ Նույն տեղում, ֆ. 201, ց. 1, գ. 73, ք. 1, գ. 289, ք. 1, 7, 8, 15:

¹⁴⁰ Նույն տեղում, գ. 73, ք. 17:

Նահանգի քաղաքացիական իշխանությունն իրականացվում էր չորս հիմնական կառույցների միջոցով, որոնք Փետրվարյան հեղափոխության անմիջական արդյունք էին հանդիսանում: Դրանք էին՝ Երևանի նահանգային գործադիր կոմիտեն, Դուման՝ որպես գործադիր մարմին, և նրան կից քաղաքային վարչությանը, բ. և գ. պատգամավորների խորհուրդը և Երևանի քաղաքագլուխը: Նահանգային գործադիր կոմիտեի նախագահության նախագահի պաշտոնը 1917 թ. մարտից զբաղեցնում էր ՀՀԴ անդամ Սմբատ Խաչատրյանը, որին որպես նախագահ կամ նահանգային կոմիսար 1918 թ. հունվարի 16-ից (29) փոխարինում է դաշնակցական Սահակ Թորոսյանը¹⁴¹: Երևանի Դումայի նախագահն էր դաշնակցական Սարտիրոս Չարությունյանը, քաղաքագլուխը՝ Էսեռ Թադևոս Տոշյանցը, պարետը՝ Արշավիր Շահխաթունին: 1917 թ. նոյեմբեր - 1918 թ. փետրվար ժամանակահատվածում Երևանի նահանգում ձևավորվում են և գործում որպես ազգային կառույցներ, Արևմտահայերի ազգային խորհրդի Երևանի շրջանային մարմինը և նոր ձևավորվող Երևանի ազգային խորհուրդը, նրան կից՝ Ապահովության կամ Հատուկ կոմիտեն, Հայ զինվորական միությունը: Բացի իր առջև կանգնած կենսական, անմիջական խնդիրների քննարկումից, Հայ զինվորական միությունը Անդրկովկասի հայ իրականության մեջ առաջին ազգային կառույց էր, անմիջապես արձագանքեց երկրամասային իշխանության և զինադադարի հրատապ հարցերին:

1918 թ. նոյեմբերի 21-ին (դեկտեմբերի 3) Երևանի քաղաքային Դումայի դահլիճում բացվեց Հայ զինվորական (զորականների) համառուսաստանյան առաջին համագումարը: Կճռական իրավունքով պատգամավորների թիվը հասնում էր 150-ի¹⁴²: Ազգային զինվորական համագումար իրավիճելու գլխավոր դրոպապատճառը բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով Կովկասյան բանակի կազմալուծման գործընթացն էր, ազգային զորաբանակի ձևավորման խնդիրը, ինչպես նաև Կոմիսարիատի ստեղծումը: Հայկական ազգային զինուժի կազմակերպման և նրա ղեկավար մարմինը դարձավ 1917 թ. մայիսի վերջին Թիֆլիսում ստեղծված Հայ զինվորական միությունը (ՀԶՄ)¹⁴³, որի կենտրոնական կոմիտեի նախագահ է ընտրվում Արսեն Շահնազյանը¹⁴⁴: Համագումարը փակվեց նոյեմբերի 25-ին (դեկտեմբերի 8) և ընդունեց մի շարք հրատապ որոշումներ¹⁴⁵: Համագումարը հաստատեց նաև միության կանոնադրությունը, փոխեց նրա կառուցվածքը¹⁴⁶: Համագումարից հետո, 1918 թ. հունվարին հայկական զինվորական կյանքի ղեկավարությունը ստանձնում է Հայ զինվորական խորհուրդը¹⁴⁷:

Նորահայտ արխիվային նյութերից պարզվում է, որ Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին կից, նոյեմբերի վերջին ձևավորվում է Հատուկ կոմիտե, որի մասնաճյուղի ստեղծման գործը հանձնարարվում է Արամ Մանուկյանին: Արտակարգ լիազորություններով օժտված այդ կառույցին անդամակցում էին Խ. Կարճիկյանը, Ռ. Տեր-Մինասյանը, Ս. Արարատյանը, Հ. Բեկլադյանը և այլք¹⁴⁸: 1918 թ. դեկտեմբերի վերջին Թիֆլիսի Հայոց ազգային, Արևմտահայ,

¹⁴¹ ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 114, թ. 11:

¹⁴² Հորիզոն, 1917, 11 նոյեմբերի, թիվ 248:

¹⁴³ Վ. Հ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը, Եր., 1997, էջ 276-287:

¹⁴⁴ Ջանգ, 1917, 23 նոյեմբերի, թիվ 3:

¹⁴⁵ Աշխատանք, 1917, 29 նոյեմբերի, թիվ 59:

¹⁴⁶ Ջանգ, 1917, 28 նոյեմբերի, թիվ 7:

¹⁴⁷ ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 108, թ. 2:

¹⁴⁸ Նույն տեղում, ֆ. 222, ց. 1, գ. 24, (1 մաս), թթ. 29, 33, 35-37:

Ապահովության և Հայ զինվորական խորհուրդների հատուկ լիազոր - ներկայացուցչի կարգավիճակով Երևան է վերադառնում Ա. Մանուկյանը և լծվում ամենօրյա ազգանվեր աշխատանքի: Նրա մոտ արդեն ձևավորվել էր հստակ դիրքորոշում միացյալ իշխանության և նրանում արմատավորվող վրաց-թաթարական հակահայկական դաշինքի հարցում: Հատուկ կոմիտեն դարձավ Երևանի նահանգի փաստական իշխանությունը, Արամ Մանուկյանը՝ այդ ոչ պաշտոնական ազգային իշխանության ղեկավարը: Վերջինիս ստեղծմամբ Երևանի ազգային խորհուրդը դադարեցրեց իր գործունեությունը:

1917 թ. հոկտեմբեր - 1918 թ. հունվար ամիսներին Երևանում ու նահանգում շարունակվում էին ժողովրդավարական հասարակական գործընթացները: Այն իր մեջ ընդգրկում էր թե՛ նահանգային կառույցները և թե՛ կուսակցությունների գործունեության ոլորտը, թեև ոչ բավարար չափով էր համակարգված ու նպատակային¹⁴⁹:

Երևանի նահանգը և նրա վարչական կենտրոն Երևան քաղաքը կազմակերպված հակահայկական թուրքական, քուրդ-թաթարական հարձակումների փուլը մտավ 1918 թ. հունվարին, չնայած 1917 թ. նոյեմբերին արդեն նկատվում էին մասնակի և տեղային բնույթ կրող միջադեպեր: 1918 թ. հունվար-մարտ ամիսների ընթացքում Երևանի նահանգում մահմեդական տարատեսակ խռովություններ, ավազակային հարձակումներ, հեռահաղորդակցության ուղիների, երկաթուղագծերի, ճանապարհների խափանման դեպքեր տեղի ունեցան Արարատում (Դավալու), Վեդիում, Արտաշատում (Ղունարլու), Մասիսում (Ուլուխանլու), Սուրմալույում, Շարրուում, Նախիջևանում, Երևանում, բազմաթիվ այլ գյուղերում ու բնակավայրերում¹⁵⁰:

Հայոց ազգային խորհրդի նախածեռնած խաղաղարար միջոցառումները և հատկապես հայկական և մահմեդական ազգային խորհուրդների ներկայացուցիչների խորհրդակցությունը և ազգամիջյան համագումարը (1918 թ. փետրվարի 5-8-ը) արդյունք չտվեցին¹⁵¹: Միզուցե ուշացած, սակայն մշակվեց պատժիչ գործողությունների պլանը, որը փետրվարին Երևանի ու Սուրմալուի գավառներում երկաթուղային ու խճուղային ճանապարհների փակումից հետո դարձավ անհրաժեշտություն: Փետրվարի 20-ին թաթարական-մահմեդական խռովությունների ալիքը հասավ Երևան¹⁵²: Ա. Մանուկյանը խորհրդակցելով գեներալ Մ. Սիլիկյանի և Դրոյի հետ, որոշեց դիմել կտրուկ միջոցների: Նախապես պատժվեցին Ուլուխանլու և շրջակա 18-20 թաթարաբնակ գյուղերը, ապա և փետրվարի 21-ին գնդապետ Դ.-Բեկ-Փիրումյանի նախագահությամբ գումարվեց նահանգային բոլոր կառույցների ժողով¹⁵³:

Չնայած մահմեդական կողմի զգալի մարդկային ու նյութական կորուստներին միևնույն է, թուրքական ռազմա-քաղաքական ղեկավարությունը հասավ գլխավոր խնդիրների լուծմանը: Հայկական նորաստեղծ զինուժին՝ կորպուսին կաշկանդելով Երևանի նահանգի անարխիկ և բազմաթիվ ուղղություններում ծավալվող դեպքերի շղթայի մեջ, նա հեշտությամբ գրավեց Արևմտյան Հայաստանը և մուտք գործեց Անդրկովկաս:

¹⁴⁹ Գորիզոն, 1917, 29 հոկտեմբերի, թիվ 231, 7 նոյեմբերի, թիվ 237, 8 նոյեմբերի, թիվ 238:

¹⁵⁰ ՀԱԱ, ֆ. 103, ց. 1, գ. 113, թթ. 1-3, 12, 16, 66, 71-72, 117:

¹⁵¹ Գորիզոն, 1918, 25 հունվարի, թիվ 17:

¹⁵² Кавказское Слово, 1918, 21 февраля, N 41:

¹⁵³ Գորիզոն, 1918, 23 փետրվարի, թիվ 40:

եզրակացությունների մեջ ի մի են բերված աշխատության հիմնական եզրահանգումներն ու արդյունքները.

1. Բոլշևիկյան հեղաշրջումը Անդրկովկասում ընկալվեց որպես դավաճանություն Փետրվարյան հեղափոխության և ժամանակավոր կառավարության հռչակած երկրի ժողովրդավարական զարգացման հեռանկարին: Կարճատև անորոշությունից հետո երկրամասի բոլոր կուսակցությունները և հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները, բացի բոլշևիկներից, դատապարտեցին իշխանության ոչ օրինական զավթումը, համերաշխ էին իրենց գնահատականներում: Քաղաքական կայունության հաստատման միակ ուղի և երաշխիք համարվեց Սահմանադիր ժողովի հրավիրումը: Փետրվարյան հեղափոխության դասերը լավագույնս ընկալած վրացական մենշևիկները Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքում անմիջապես գերիշխող դիրք գրավեցին: Մի կողմից, ԳԳԴ-ը միանում էր վրացական մենշևիկների կողմից գլխավորվող ժողովրդավարական ճամբարին, մյուս կողմից հանդիպելով այդ նույն տանդեմին, արդյունքում՝ հայտնվում էր մեկուսացման մեջ:

Հոկտեմբերյան հեղաշրջման նկատմամբ հատուկ վերաբերմունք դրսևորեցին Անդրկովկասում և Կովկասյան ռազմաճակատում տեղակայված բանակային հեղափոխական-դեմոկրատական կազմակերպությունները, մարմինները, հրամանատարական կազմը: Այդ արձագանքների և գնահատականների առանձնահատկությունն այն էր, որ այդ հարցում չկար միատարրություն:

2. Անդրկովկասում բոլշևիկյան հեղաշրջման արձագանքները և տարաբնույթ քաղաքական ատյաններում վերջինիս նկատմամբ համապատասխան դիրքորոշման ձևավորումը վերջին հաշվով ենթատեքստում պարունակում էր իշխանության համար պայքարի բովանդակություն: Երկրամասի հեղափոխական-դեմոկրատական կենտրոնների, հեղափոխական-սոցիալիստական և ազգային-դեմոկրատական կուսակցությունների, Կովկասյան բանակի հրամանատարության մոտ բարձրացավ տեղական նոր՝ Պետրոգրադի բոլշևիկյան կառավարությունը չճանաչող իշխանության կազմակերպման հիմնահարցը: Այն ուներ գերխնդիր՝ Անդրկովկասը գերծ պահել բոլշևիզմից:

Բաքվում իշխանությունն անցավ պատգամավորական խորհրդին, իսկ Թիֆլիսում Անդրկովկասյան կոմիսարիատին, ինչը հիմնականում մենշևիկների ու բոլշևիկների պայքարի արդյունք էր: Փաստորեն Թիֆլիսի բոլշևիկների երկրամասային կենտրոնի մեծ մասը չհամարձակվեց և չիրականացրեց այն, ինչին միանգամից ձեռնամուխ եղան Բաքվի բոլշևիկները: Ստացվում է, որ Թիֆլիսում հակաբոլշևիկյան ուժերը՝ ի դեմս վրացական մենշևիկների, ավելի «դեմոկրատ» և զորեղ գտնվեցին, քան էսեռները Բաքվում:

3. Քաղաքական անկայուն, սպասողական վիճակը ստեղծեց նախադրյալներ և լայն հնարավորություններ, որպեսզի վրացական մենշևիզմը ստանձնի Անդրկովկասի քաղաքական ղեկավարությունը և բոլշևիկյան Ռուսաստանի ու տեղական բոլշևիզմի դեմ ձևավորի իշխանության նոր մարմին, մանավաճդ, որ Օզակոնը լիովին վարկաբեկվել ու սպառել էր իրեն:

1917 թ. նոյեմբերի 10-14-ի ընթացքում Թիֆլիսում կայացավ անդրկովկասյան նոր կառավարության ձևավորման գործընթացը՝ երեք փուլերով, որը Բաքվի զարգացումներից հետո արագացվեց երկրամասի քաղաքական կենտրոնում:

4. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, Անդրկովկասի իշխանության ձևավորման գործընթացին զուգահեռ, նոր բովանդակությամբ բարձրացավ ազգային ինքնակազմակերպման խնդիրը: Ազգային գործոնի դերի բարձրացման,

Անդրկովկասում ազգային համերաշխություն հաստատելու ճանապարհով՝ սկզբից ևեթ, կուսակցությունների կողմից փորձ էր արվում ազգային տեսակետից «կազմակերպված» երկրամասը հակադրել խորհրդայնացված ու ապազգային Ռուսաստանին: Կոմիսարիատի ձևավորմամբ, ապա և նոյեմբերի 19-23-ը կայացած վրացական ազգային համագումարի ընդունած որոշումներով և վրացական ս.-դ. մենչևիկների ծանրակշիռ գաղափարական և կազմակերպական ճնշմամբ կայացվեց հոկտեմբերյան հեղաշրջմանը հաջորդած քաղաքական փուլի գլխավոր որոշումը, այն է՝ Անդրկովկասի անջատումը խորհրդայնացված Ռուսաստանից և ազգային հասարակական-քաղաքական, ինչպես զինվորական կյանքի ինքնուրույն տնօրինումը: Կառավարական, կուսակցական, հանրային մակարդակներում բեև առաջադրվում էր համառուսաստանյան միասնական պետության կազմում ազգային լայն ինքնավարության պահանջը, սակայն վրացական մենչևիզմի շրջանակներում և ինչ-որ չափով նաև Դաշնակցության մի մասի կողմից հետևողականորեն մշակվում էր անկախ ազգային պետականության գաղափարը: Մահմեդական-թաթարական միջավայրում ազգային շարժումը սկզբում դրսևորվեց բուլշևիկյան տիպի կուսակցությունների ասպարեզ գալով:

5. Միաժամանակ, ինչպես հայկական, այնպես էլ մահմեդական ազգային-դեմոկրատական կուսակցություններն ու կազմակերպությունները ընթանում էին սրընթաց զարգացող իրադարձությունների ետևից, առայժմ վճռորոշ դեր չունեին Անդրկովկասում իշխանությունը գրավելու համար մղվող պայքարում: Անդրկովկասի կոմիսարիատի կազմում Հայ ժողովրդական կուսակցության, մասնավորապես համառուսաստանյան մասշտաբի գործիչ Մ. Պապաջանյանի և վրացական ազգային-դեմոկրատական կուսակցության չընդգրկելը, բուրժուազիայի քաղաքական ուժի մեկուսացումը՝ նոր երկրամասային իշխանության հանդեպ, բուլշևիկներից հետո թերևս երկրորդ լուրջ ընդիմադիր ուժը ձևավորեց, որը մեծ առճակատման սկիզբն էր միայն Անդրկովկասում և հատկապես, հայ իրականության մեջ:

6. Հիմնվելով Անդրկովկասի ժողովուրդներին ուղղված հռչակագրի դրույթների վրա, Կոմիսարիատը ձեռնամուխ եղավ անկախ երկրամասի սոցիալ-տնտեսական վերափոխումներին: Հաշվետու ժամանակահատվածում՝ 1917 թ. նոյեմբերի 15 - 1918 թ. հունվարի 15-ը, անդրկովկասյան կառավարությունն իրականացրեց մի շարք ծրագրեր, ընդունեց հրատապ որոշումներ բոլոր կոմիսարությունների ուղղություններով: Որոշակի նպատակային աշխատանք իրականացրեց նաև Կոմիսարիատին կից ստեղծված Փոքր խորհուրդը, որը լիազորված էր զբաղվել զուտ տնտեսական, կենցաղային առօրյա խնդիրներով:

Որպես Անդրկովկասի հեղափոխական-սոցիալիստական կուսակցությունների դաշինք, Կոմիսարիատը փորձեց լուծում տալ ռուսաստանյան պետության ամենաբարդ հիմնահարցին՝ հողային խնդրին: Սահմանադիր ժողովի նախաշեմին և ժողկոմխորհի կողմից «Հողի մասին» հրովարտակի հռչակումից հետո, երկրամասի կառավարությունը ցանկացավ լուծում տալ հողային հարցին և այն հակադրել խորհրդային իշխանության մոտեցմանը: Ընդունելով հողային օրենքը՝ հողի աշխարհականացման, պետականացման, բռնագրավման եղանակները՝ փակուղու առջև կանգնեց: Դա սպասվում էր, քանի որ կառավարությունը ձևավորելիս ընտրելով ազգային, բայց միաժամանակ, հեղափոխական-սոցիալիստական գերակշռություն ունեցող կուսակցական մոտեցումը, այդպիսով և հողային հարցում ձևավորվեց ընդգծված տարանջատում՝ բեկական-մահմեդական ղեկավարների և սոցիալիստական հայ և վրացի գործիչների միջև:

7. Ռուսաստանյան պետության մեջ, այդ թվում և Անդրկովկասում բուլղարական հեղաշրջումից հետո իշխանության համար պայքարի առանձնահատուկ դրսևորումներից էր զուգահեռ ընթացող քաղաքային դումաների և Սահմանադիր ժողովի ընտրությունները:

8. Անդրկովկասյան կոմիսարիատի ընդունած հռչակագրին ու «Անդրկովկասյան զենստվոյական հաստատությունների ժամանակավոր կանոնադրությունը» առաջընթաց էր երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառների ժողովրդավարացման գործընթացում: Միաժամանակ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ Ռուսաստանում 19-րդ դարի կեսերից սկիզբ առած զենստվոյական շարժումը, փաստորեն, Անդրկովկասում լուծում էր ստանում բուլղարական հեղաշրջումից հետո: Կայսրության փլուզման և դաշնային հանրապետության կայացման միջև ընկած ժամանակահատվածում, երբ նախկին կայսրության ազգային շրջաններն օբյեկտիվորեն անջրպետվելով բուլղարացի, մի կողմից արագացնում էին անջատողական, ազգային անկախությունների ձեռք բերման գործընթացը, մյուս կողմից՝ իհարկե, զենստվոյական շարժումը՝ որպես ժողովրդավարական գործընթաց համարում էին խորհրդային իշխանության դեմ պայքարի պասիվ ձև, հակադրվում էին ժողկոմխորհին: Եթե Ռուսաստանի նահանգներում զենստվոյական հաստատությունների ներդրումը առավելապես սոցիալ-տնտեսական, հասարակական-հանրային խնդիրներ էր հետապնդում, ապա Անդրկովկասի ազգային բազմաշերտ միջավայրում, զենստվոյական քաղաքականությունն ի դեմս Կոմիսարիատի դիրքորոշման, վերածվում էր երկրամասի վարչական սահմանաբաժանումների, ազգային տարանջատման հիմնահարցի և երկրամասի իշխանության վրաց-մահմեդական ղեկավարության բացահայտ հակահայկական քաղաքականության պատճառով սկիզբ էր դնում ազգամիջյան գործնական հակամարտությանը: Անկախ իրադարձությունների զարգացումից, երկրամասի վրացական և մահմեդական-թաթարական շրջաններում մտցվեց զենստվո, իսկ հայկական տարածքները համարվեցին վիճելի՝ զենստվո չմտցվեց:

9. Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասային կենտրոնի և Կովկասյան բանակի հրամանատարության հետ համատեղ, հավանություն տալով թուրքական հրամանատարության կողմից առաջադրված հաշտության առաջարկին, հետհոկտեմբերյան վայրիվերումների փուլը, Թուրքիայի հետ մերձենալով գործով ապացուցեցին, որ երկրամասը Ռուսաստանի մաս չէ այլևս, իսկ Սահմանադիր ժողովի ցրումից հետո օբյեկտիվորեն վերածվեցին դաշնակիցների: Հակասությունն այն է, որ Թուրքիայի հետ մերձեցումը ընթանում էր Գերմանիայի հետ ժողկոմխորհի սկսած անջատ բանակցությունների համատեքստում: Փաստորեն, Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասում և Կովկասյան ռազմաճակատում որդեգրելով բուլղարական ռազմավարությունը, ևս մի անջատ դաշինքի էր գնում այդ նույն Գերմանիայի դաշնակից Թուրքիայի հետ, բայց ոչ թե Գերմանիայի նման բուլղարիկներին երաշխիքներ տալու, այլ վերջինիս իշխանությունը չճանաչելու ճանապարհով:

10. «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը դիտարկվում է որպես իշխանության համար պայքարի դրսևորում: Պետոզորադի իշխանությունը Արևմտյան Հայաստանի հիմնահարցին ընթացք էր տալիս «Հաշտության մասին» հրովարտակի համատեքստում, այսինքն՝ Բրեստ-լիտովսկի բանակցությունների և Երզնկայի զինադադարի պարտավորական ու այդպիսով ոչ հայանպաստ քաղաքականության պայմաններում: Թեև հրովարտակի մշակման գործընթացն

ընթացում էր մի կողմից ժողկոմխորհի ղեկավարության և մյուս կողմից մի խումբ հայ բոլշևիկների ու Դաշնակցության համագործակցության փոխշահավետ հարթության վրա, մինչև այն է այն լիովին հակասում էր բոլշևիկյան ղեկավարության որդեգրած և իրականացվող քաղաքականությանը, ավելին, բոլշևիկյան հիմնարար հրովարտակները մերժում էին ընդունած որոշումները: Կեղծիքը կայանում էր նրանում, որ հրովարտակը ստեղծվում ու հրապարակվում էր ռուսական բանակի Կովկասյան ռազմաճակատից ծրագրավորված դուրս բերելով (Պետրոգրադում իշխանությունը պահպանելու համար), գերմանո-թուրքական խմբավորման հետ անջատ բանակցությունների, բացահայտ թուրքամետ հայտարարությունների ու թուրքական արշավանքի պայմաններում:

11. Ելիզավետպոլի մահմեդական գյուղացիական խռովությունները, ապա և Բաքու-Թիֆլիս երկաթուղային հանգույցների մոտ կատարված ոճրագործությունները առավել մեծ ու համապարփակ հիմնահարցի՝ երկրամասի իշխանության հիմնահարցի բաղկացուցիչներն են: Ելիզավետպոլն ու Շամխորը դարձան 1917 թ. նոյեմբերից սկսված իշխանության համար մղվող պայքարի գլխավոր վայրագ հանգուցալուծումը: Արյունոտ դեպքերի գլխավոր մեղսակիցները վրացական մենշևիզմի առաջնորդներն էին և մահմեդական ազգային կոմիտեն, այսինքն՝ Կոմիսարիատում իշխանությունը զավթած վրաց-մահմեդական ազնվականական-բեկական մեծամասնությունը:

12. 1917 թ. նոյեմբերին, ապա և 1918 թ. հունվար-փետրվար ամիսներին Անդրկովկասում ստեղծվեց իշխանության գրավման իրական այլընտրանք: Առաջին անգամ բոլշևիկներն իշխանությունը կարող էին գրավել մինչև վրացական մենշևիկների կողմից Թիֆլիսի Ջինապահեստի զավթումը, երկրորդ անգամ՝ Սարիղամիշից դեպի Թիֆլիս Կովկասյան բանակի զորամասերի առաջխաղացմամբ: Սակայն Բաքվի բոլշևիկների և Ստ. Շահումյանի ծրագիրը չիրականացավ մի շարք պատճառների հետևանքով. ա) բոլշևիկների երկրամասային և Թիֆլիսի կոմիտեներում չստեղծվեց միասնական կարծիք իշխանության գրավման հարցում, բ) Բաքվի բոլշևիզմն ի դեմս Ստ. Շահումյանի, առավելապես հայկական երևույթ էր դիտվում և առաջին հերթին ուղղվում էր վրացական ազգայնականության՝ մենշևիզմի և, իհարկե, թաթարական ազգային շարժման դեմ:

13. 1917 թ. նոյեմբեր-դեկտեմբերից մինչև 1918 թ. փետրվար-մարտ ամիսներն ընթացող թուրք-թաթարական տարաբնույթ և համաձայնեցված գործողությունները Արևելյան Անդրկովկասում, Թիֆլիս-Բաքու երկաթուղու շրջանում, Երևանի նահանգում, հանգեցրին այս փուլի գլխավոր հանգուցակետին՝ Բաքվի գրավման ծրագրին: Չլավորվեցին երկու հակամարտող ճամբարները՝ թուրք-թաթարական և հայ-ռուսական, այն էլ առանց ռուսաստանյան պետության ուղղակի միջամտության: Այս առճակատումն ընդգրկեց մի կողմից՝ ազգամիջյան բախման, մյուս կողմից՝ իշխանության հիմնահարցերը:

Ընդհարումները Բաքվի նահանգի և Բաքու քաղաքի հայ ազգաբնակչության համար վերածվեցին ընդգծված ինքնապաշտպանության, ազգապահպանման գործընթացի: Ավելին, Բաքվի դեպքերը մեր կարծիքով անհրաժեշտ է քննարկել նաև Հայկական հարցի համատեքստում, այն առումով, որ Բաքվի հայկական զինուժը բացի Բաքվից ուներ մեկ այլ, առավել կենսական գերմպատակ՝ կանգնեցնելով թուրքական արշավանքը դեպի Արևելյան Հայաստան ու Բաքու դրանով իսկ աջակցել Արևմտյան Հայաստանի պաշտպանությանը:

Պանթուրքիզի համատեքստում նորույթը թերևս այն էր, պանթուրքիստական ուժերին էին միացել նաև վրացիները, ինչը ոչ թե պատահական համագործակցության դրվագ էր, այլ հետևողական վրացական-թաթարական և վրացական-թուրքական համագործակցության արդյունք, որոնք Բաքվի դեմ մղվող արշավանքին աջակցում էին Անդրկովկասի իշխանության՝ Սեյմի ու Կոմիսարիատի մակարդակով: 1918 թ. մարտյան իրադարձությունները մուսավաթական խռովության արդյունք են: Այն նպատակ ուներ Բաքվում տապալել ժողովրդավարական խորհրդի իշխանությունը, գրավել քաղաքը և այն հռչակել թաթարական արիեստատիոն հանրապետության կենտրոն: Եվ քանի որ երկրամասի գլխավոր նավթարդյունաբերական կենտրոնում իշխող էր հայկական տարրի և ազգային կազմակերպությունների ու հաստատությունների ազդեցությունը, ուստի այդ իշխանության և Բաքվի համար պայքարը վերածվեց Բաքվի և նահանգի հայ ազգաբնակչության գոյապայքարի: Այս համատեքստում կայացավ նաև հայկական բոլոր հոսանքների ու կուսակցությունների համատեղ հանդես գալու աննախադեպ համերաշխության ու փոխգործունեության դրվագը:

14. Բոլշևիկյան հեղաշրջման հետևանքով և Կոմիսարիատի որդեգրած Ռուսաստանից անջատ գործելու քաղաքականության համատեքստում պարզ դարձավ, որ Անդրկովկասի ազգերն այսուհետև պետք է զբաղվեն «սեփական հայրենիքի» որոնման հարցերով: Թիֆլիսի կենտրոնական Հայոց ազգային խորհուրդն աստիճանաբար հանդգնելով այն հարցում, որ Կոմիսարիատի քաղաքական ղեկավարությունն ի դեմս վրացական մենշևիկների այլևս թույլ չի տա հայկական քաղաքական վերնախավի գերիշխանությունը Թիֆլիսում, հարկադրված հայացքն ուղղում է Երևան: Երևանն ու Երևանի նահանգը սկսում են ընկալվել որպես հայության համախմբման, հայկական հասարակական-քաղաքական, զինուժի կենտրոն: Այստեղից էր հնարավոր ղեկավարել Արևմտյան Հայաստանի պաշտպանության խնդիրը, այստեղ էլ հնարավոր կազմակերպել ազգային զինական ուժը:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկում ներկայացված են ատենախոսության մեջ օգտագործված արխիվային նյութերը սկզբնաղբյուրները, պարբերական մամուլը, գրականությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրապարակած հետևյալ աշխատություններում.

ա/ Մենագրություններ

1. Արևմտահայերի համագումարները և Հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Երևան, «Ձանգակ-97», 2007, 77 էջ:
2. Հայկական պահանջատիրություն. Հայութեան ինքնակազմակերպման խնդիրը եւ Արեւմտահայերի 3-րդ համագումարի անհրաժեշտութիւնը, Երևան, «Ձանգակ-97», 2010, 118 էջ:
3. Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. փետրվար), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2010, 263 էջ:

բ/ Հոդվածներ

1. Քաղաքական իրադարձությունները Ռուսաստանում 1917 թ. և Հայկական հարցը, Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի Հայկական հարցի գիտական կենտրոն Մատենաշար, թիվ 1, Հայկական հարց, Հայկական հարցի միջազգայնացման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր (6-ը և 23-24-ը նույնների 1998 թ.) Երևան, «Արտագերս» հրատ., 2000, էջ 118-120:
2. Բախտորոշ իրադարձություններ հայ ժողովրդի կյանքում, Օրենք և իրականություն, իրավաբանական-գիտահանրամատչելի հանդես, Երևան, 2002, թիվ 10, Մայիս, էջ 12-14:
3. Армянский вопрос на съездах западных армян в 1917 и 1919 гг., Армянский Вестник, N 1-2, Москва, изд. “Армянский Вестник”, 2002, с. 5-7.
4. Проблема преемственности Российской внешней политики в армянском вопросе (1916-1917 гг.), Вестник РАУ, Ереван, изд. РАУ, N1/2003г., с. 46-49.
5. Գ.Յ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության առնչությունները Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918 թ. հունիս-նոյեմբեր), Գրախոսություն, ԵՊՀ, Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, թիվ 2(113), 2004, էջ 186-189:
6. Հայաստանը անկախության նախօրեին, 1918 թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի առաջին հանրապետության 85-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, ՌՀՀ հրատ., 2005, էջ 9-19:
7. Խաչատուր Կարճիկյան, նշանավոր ճեմարանականներ, Պրակ Բ, հրատ., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2009, էջ 193-196:
8. Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականությունը երկրամասի վարչական սահմանաբաժանումների և զենստվոների հարցում, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 3(626), Երևան, «Գիտություն» հրատ., 2009, էջ 60-73:
9. Իշխանության ազգայնացման հիմնահարցը Անդրկովկասում (1917 թ. նոյեմբեր), ՀՀ ԳԱԱ Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), թիվ 1(183), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 80-98:
10. Անդրկովկասյան Կոմիսարիատի գործունեության հասարակական-քաղաքական ոլորտը, Հայոց պատմության հարցեր, Գիտական հոդվածների ժողովածու, թիվ 11, Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2010, էջ 210-224:
11. Անդրկովկասյան Կոմիսարիատի ռազմա-քաղաքական, դիվանագիտական գործունեությունը և հայկական ազդեցիկ կուսակցությունների դիրքորոշումը, Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարան, ՌՀՀ լրաբեր թիվ 1, Երևան, ՌՀՀ հրատ., 2010, էջ 47-64:
12. Երևանը և Երևանի նահանգը Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, ՀՀ ԳԱԱ, ՊԲՀ, թիվ 3(185), Երևան, 2010, էջ 72-93:
13. Հայկական հարցը և հայ հասարակության ինքնակազմակերպման խնդրի փուլերը, 21-րդ դար, Տեղեկատվական-վերլուծական հանդես, «Նորավանք», Երևան, 2010, թիվ 2(30), էջ 31-39:
14. Անդրկովկասյան Կոմիսարիատի սոցիալ-տնտեսական, ֆինանսական և կրթական-լուսավորական գործունեությունը, ԼՀԳ, թիվ 3(629), 2010, էջ 23-39:
15. Грузино-татарские антироссийские мятежи в районе закавказской железной дороги и армянская позиция (ноябрь 1917-март 1918), Историческое пространство, Проблемы истории стран СНГ, N1, Москва, 2010, "Наука", с. 58-69.

16. Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Կոմիսարիատի ստեղծումը, ԼՂԳ, թիվ 4, 2011, էջ 12-21:
17. Հայ Յեղափոխական դաշակցության դերը հայոց պետականության վերականգնման գործում, Հայ Յեղափոխական դաշակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր, «Հայ դատ» մատենաշար, թիվ 3, Երևան, 2011, էջ 43-46:
18. Проблема власти в Закавказье в 1917 г. и армянский фактор, Армения в диалоге цивилизаций, Материалы международной научной конференции, 28 апреля, 2011 года, Нижний Новгород, Деком, 2011, ст. 19-25 (207 ст.).

МЕЛИКЯН ВАГАН ГЕНРИКОВИЧ
АРМЯНСКАЯ ДЕЙСТВИТЕЛЬНОСТЬ И ПРОБЛЕМА ВЛАСТИ В ЗАКАВКАЗЬЕ
(НОЯБРЬ 1917 Г. - МАРТ 1918 Г.)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 4-го мая 2012 года в 14⁰⁰, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Большевистский переворот в Закавказье был воспринят как предательство по отношению к февральской революции и провозглашенной Временным правительством перспективе демократического развития страны. Все партии края кроме большевиков осудивших захват власти, были солидарны в своих оценках.

Отголоски Октябрьского переворота в Закавказье и формирование по отношению к нему позиции, в конечном итоге носили в себе содержание борьбы за власть.

В октябре 1917 г. в Закавказье окончательно были сформированы два центра для организации власти — Баку и Тифлис. В Баку, как и в Петрограде, мирным путем и при решающей роли армии, до 5-го ноября власть перешла к большевикам. Тем самым, в Закавказье было дано начало альтернативе советской власти.

В Тифлисе борьба за власть прошла несколько этапов. Параллельно краевому совету, 28-го октября было образовано “Делегатское собрание”, как совет представляющей большевизированные части Кавказской армии. Тифлисский краевой совет не признал правомочность “Делегатского собрания”, что стало первым шагом на пути к непризнанию власти большевиков.

Одновременно, часть большевиков в Тифлисе не посмела и не осуществила то, к чему решительно стремились бакинские большевики. Это создало предпосылки, для того, чтобы грузинский меньшевизм взял на себя инициативу политического руководства Закавказья и организовал антибольшевистский орган власти. С 10-го по 14-ое ноября 1917 г. в Тифлисе протекал процесс организации новой закавказской власти. 15-го ноября Озакон прекратил свою деятельность и издал приказ о принятии власти Комиссариатом.

Грузинский национальный съезд постановил главное требование послеоктябрьского этапа — отделение Закавказья от советизированной России и выдвнул идею независимой государственности.

В отчетный период своего правления, с 15 ноября 1917-15 января 1918 гг., Комиссариат успел осуществить определенные реформы в социально-экономической, финансовой, образовательно-просветительской отраслях. Среди вопросов ставших предметом относительно всесторонних обсуждений, стала проблема принятия земельного закона.

Своеобразными проявлениями борьбы за власть выступают параллельно проходящие выборы в Городские думы и Учредительное собрание. В программе действий Комиссариата ключевое место занимала проблема организации земств. 14-го января 1918 г., на основе всероссийского земского движения и осуществленной Временным правительством идеологической и организационной работы, был создан “Временный устав Закавказских земских учреждений”. Принятые Комиссариатом Декларация и Устав являются прогрессивным шагом в процессе демократизации разных отраслей общественно-политической жизни края.

В многослойной национальной среде Закавказья, земская политика в лице позиции Комиссариата, переросла в проблему административного разделения края и национального отмежевания. Одновременно земское движение как демократический процесс рассматривалось как пассивная форма борьбы против большевистской власти, оно противопоставлялось Совнаркому.

Закавказский Комиссариат совместно с краевым центром и командованием Кавказской армии, одоблив мирное предложение турецкого командования, завершили этап послеоктябрьских шатаний и сближения с Турцией, на деле

доказали, что Закавказье не часть России, а после распухания Учредительного собрания объективно превратились в союзников.

Декрет “О Турецкой Армении” следует рассматривать, как проявление борьбы за власть. Большевицкая власть Петрограда протолкнула проблему Западной Армении в контексте декрета “О мире”, т.е. на волне пораженческих настроений и тем самым в не проармянских условиях Брест-литовских переговоров и Ерзнкийского перемирия. Противоречие состоит в том, что декрет создавался и публиковался в условиях запланированного вывода русской армии из Кавказского фронта, сепаратных переговоров с турецко-германским командованием, откровенных протурецких заявлений и турецкого нашествия.

Мусульманские крестьянские мятежи Елизаветпольской губернии и далее погром русских солдат у железнодорожных узлов Баку-Тифлис, являются составной частью более всеобъемлющей и крупной проблемы – проблемы краевой власти. В качестве зачинщиков выступают носители грузино-татарского дворянского-бекского большинства, захвативших власть в Коммисариате.

В ноябре 1917 г. и в январе-феврале месяцах 1918 г. в Закавказье дважды создавалась реальная альтернатива захвата власти. В тот же период, турецко-татарская различного рода и согласованная деятельность в Восточном Закавказье, Ереванской губернии, привела к программе захвата Баку. Были сформированы два противоборствующих лагеря – турецко-татарский и армяно-русский без прямого вмешательства российского государства. Это противостояние охватило с одной стороны проблему межнационального столкновения, с другой – власти. Для армянского населения Бакинской губернии и города Баку, эти столкновения превратились в ярко выраженную самооборону. Бакинские события нужно рассматривать и в контексте Армянского вопроса, в том смысле, что армянское воинство Баку имело и другую сверхзадачу – остановив турецкое нашествие в Восточное Закавказье и Баку, содействовать обороне Западной Армении. Новизна в том, что к пантюркистским силам присоединились также грузинские воинские формирования, что само по себе не случайный эпизод взаимодействия, а следствие последовательной грузино-татарской и грузино-турецкой взаимовыгодной политики.

Вследствие большевистского переворота и в контексте сепаратной от России политики Коммисариата, стало ясно, что народы Закавказья в дальнейшем должны заниматься поисками “собственной отчизны”. Ереван и Ереванская губерния стали восприниматься как очаг консолидации армянства, и как центр общественно-политической жизни и воинства армянского народа.

MELIKYAN VAHAN H.
ARMENIAN REALITY AND THE PROBLEM OF THE POWER IN THE
TRANSCAUCASUS (NOWEMBER 1917 - MARCH 1918)

Dissertation for the degree of the Doctor of Sciences (History) on the specialization of "History of Armenia" 07.00.01

The defense of the dissertation will be held on the 4th of May, 2012, 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4):

SUMMARY

The Bolshevik coup in Transcaucasia was accepted as treachery towards the February revolution and the perspective of democratic development of the country proclaimed by the Provisional Government. All the parties of the region, except the Bolsheviks, condemned the seizure of power and demonstrated solidarity in their assessments.

Reverberations of the October revolution in Transcaucasia and the position formed towards it eventually bore the hallmarks of struggle for power.

In October, 1917, two centres were finally formed to organize power in Transcaucasia – Baku and Tiflis. In a peaceful way and with the decisive support of the army, the Bolsheviks had come to power by November 5 in Baku, as well as in Petrograd. This marked the beginning of the alternative to the Soviet power in Transcaucasia.

In Tiflis, the struggle for power had several stages. Parallel to the regional soviet, on October 28 the Delegate Assembly was formed, as a council representing Bolshevikized units of the Caucasian army. The regional soviet in Tiflis did not recognize the competence of the Delegate Assembly, which became the first step on the path of non-recognition of the Bolshevik power.

At the same time, part of the Bolsheviks in Tiflis did not dare to do what the Baku Bolsheviks carried out decisively. This created prerequisites for the Georgian Menshevism to take up the initiative of the political leadership in Transcaucasia and organize an anti-Bolshevik organ of power. On November 10-14, 1917, the process of organizing a new Transcaucasian power proceeded in Tiflis. On November 15, *Ozakom* (Regional Transcaucasian Committee) resigned, and an order was issued that the Commissariat should assume power.

The Georgian national congress put forward the main demands of the post-October stage – separation of Transcaucasia from the Sovietized Russia and the idea of independent statehood.

During the reporting period of the Commissariat government, from November 15, 1917, to January 15, 1918, the Commissariat managed to carry out definite reforms in the social-economic, financial and educational-enlightening spheres. Among the questions that became the subject-matter of relatively thorough discussions was the problem of adopting land law.

Parallel elections to the Municipal Council and the Constituent Assembly became a peculiar display of struggle for power. The problem of organizing *Zemstvo*, i.e. elective district councils in pre-revolutionary Russia, occupied a key position in the Commissariat's program of actions. On January 14, 1918, the "Temporary Charter of Transcaucasian *Zemstvo* Institutions" was created on the basis of the all-Russian *Zemstvo* movement and the ideological and organizational work carried out by the Provisional Government. The Declaration and the Charter adopted by the Commissariat were a progressive step in the democratization of diverse spheres of social-political life of the region.

In the multi-layer national milieu of Transcaucasia, the *Zemstvo* policy, as positioned by the Commissariat, developed into a problem of administrative division of the region and national dissociation. At the same time, the *Zemstvo* movement as a democratic process was considered a passive form of struggle against the Bolshevik power; it was counterposed to *Sovnarcom* (Council of People's Commissars).

The Transcaucasian Commissariat with the regional centre and the Caucasian army headquarters, having approved the peaceful proposal of the Turkish headquarters, completed the stage of post-October vacillations. Drawing closer with Turkey, they proved in practice that Transcaucasia was not part of Russia and after dissolving the Constituent Assembly, they objectively became allies.

The decree “On Turkish Armenia” is viewed as a manifestation of struggle for power. The Bolshevik power in Petrograd pushed the problem of western Armenia in the context of the decree “On Peace”, i.e. on the wave of defeatist moods and thereby not on the pro-Armenian conditions of Brest-Litovsk negotiations and the Erzinka armistice. The contradiction is in the fact that the decree was made up and issued under the conditions of a planned withdrawal of the Russian army from the Caucasian front, separate negotiations with the Turkish-German headquarters, open pro-Turkish declarations and Turkish invasions.

Muslim peasant revolts in the province of Elizavetpol and later the pogrom of Russian soldiers near the railway junction Baku-Tiflis are components of an overall and major problem – the problem of regional power. The majority of Georgian-Tatar nobles and beys, who seized power in the Commissariat, acted as instigators.

In November, 1917, and in January-February, 1918, two real chances opened up to seize power in Transcaucasia. In the same period, the diverse and coordinated Turkish-Tatar activities in Eastern Transcaucasia and the province of Yerevan brought to the program of seizing Baku. Two confronting camps were formed – Turkish-Tatar and Armenian-Russian, certainly without direct interference of the Russian state. This confrontation involved the problem of international conflicts on the one hand, and the problem of power, on the other hand. For the Armenian population of the province of Baku and the city of Baku, these collisions turned into pronounced self-defence. The events in Baku should be viewed in the context of the Armenian question as well, in the sense that the Armenian fighters in Baku had another major task – to stop the Turkish invasion of Eastern Transcaucasia and Baku and to contribute to the defence of Western Armenia. The novelty is in the fact that the Georgian military units joined the Pan-Turkic forces, which by itself is not a casual episode of interaction, but the result of a consistent and mutually advantageous Georgian-Tatar and Georgian-Turkish policy.

In consequence of the Bolshevik coup and in the context of the Commissariat policy separate from Russia, it became clear that later on the peoples of Transcaucasia must be concerned with the search of “their own motherland”. Yerevan and the province of Yerevan became perceived as the seat of consolidation of all Armenians and the centre of the social-political life of the Armenian people.